

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Դարձեալ Աղմուկ՝ Հայ-Ռուսական՝ Յարաբերութիւններուն Շուրջ

Յուլիս 1-ին, աւարտին հասաւ Ռուսաստանի սահմանադրական հանրաքուէն եւ պաշտօնական տուեալներու համաձայն ժողովուրդի 78 տոկոսը կողմ արտայայտուած է առաջարկուող փոփոխութիւններուն, որոնց շարքին էր նախագահ Վլատիմիր Փութինի պաշտօնավարման երկու շրջանի սահմանափակումին վերացումը, առիթ տալով որ ան իրաւունք ունենայ մասնակցելու յաջորդ ընտրութիւններուն եւս, երբ 2024 թուականի աւարտի անոր նախագահութեան երկրորդ շրջանը:

Հանրաքուէին առթիւ Հայաստանի Հանրային Հեռատեսիլի երեկոյեան լուրերու ժամով սփռուեցաւ կարճատեւ հաղորդում, որու ընթացքին ցուցադրուեցան Ռուսաստանի քաղաքացիներու թեր եւ դէմ կարծիքները, ինչպէս նաեւ կառավարութեան ամենէն յայտնի ընդդիմադիրներէն՝ Ալեքսի Նավալնիի քննադատական մի քանի խօսքերը:

Նավալնիի յայտնուիլը Հայաստանի պետական հեռատեսիլի վրայ անմիջապէս աղմուկ յառաջացուց, ու երեւոյթը ներկայացուցաւ որպէս Ռուսաստանի հանդէպ թշնամական վերաբերումը:

Հոս փակագիծ մը բանալով յայտնեց որ, Ալեքսի Նավալնի թեւեւ արեւմուտքի մէջ կը ներկայացուի որպէս ժողովրդավարութեան ջատագով: Սակայն, իսկութեան մէջ ան սերտ յարաբերութիւններ ունի Ռուսաստանի ազգայնամոլական շրջանակներուն հետ եւ կը պաշտպանէ այն տեսակետը, որ Մոսկուան պետք է դադորի «կերակրել» Կովկաս:

Շար.ը էջ 13

### «Մասիս» Կը Վերադառնայ Տպագիր Տարբերակին

Համավարակի հետ պայմանաւորուած արտակարգ իրավիճակներուն պատճառաւ, մօտ չորս ամիսներ դադրած էր «Մասիս» շաբաթաթերթի տպագիր տարբերակի հրատարակութիւնը:

Այդ ժամանակամիջոցին թերթը կը շարունակէր լոյս տեսնել էլեկտրոնային տարբերակով եւ կը ցրուուէր համացանցի միջոցաւ:

Այս առթիւ կը խնդրենք մեր բաժանորդներու ներողամտութիւնը եւ վստահ ենք, որ կը շարունակեն զօրավիճակ կանգնիլ «Մասիսին» ու անոր առաքելութեան:

## «Համաճարակի Այս Օրերուն Ամբողջ Հայութիւնը Պէտք է Համախմբուի Հայաստանի Իշխանութիւններուն Շուրջ»: ՍԴՀԿ Ատենապետ Ընկ. Համբիկ Սարաֆեան

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան Ատենապետ Ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեան պատասխանեց «Մասիս» աշխատակից եւ լրագրող Սագօ Արեանի հարցումներուն՝ Հայաստանի, սփիւռքի եւ Միացեալ Նահանգներու մէջ ընթացող վերջին զարգացումներուն շուրջ:

- Այսօր Հայաստանի մէջ Քորոնա«ի համաճարակը սկսած է դուրս գալ վերահսկողութենէ: Ինչպէ՞ս կը գնահատէք Հայաստանի մէջ ցարդ տարուած պայքարը եւ արդեօք կարելի՞ է միայն իշխանութիւններուն վրայ բեռնել այսօրուայ ստեղծուած ծանր իրավիճակի պատասխանատուութիւնը:

-Նկատի առնելով այս հիւանդութեան նոր ըլլալը, «Քովիտ-19» համաճարակի դէմ պայքարը մեծ դժուարութիւն եւ մարտահրաւէր էր ոչ միայն Հայաստանի նման փոքր երկրի մը համար, այլ ամենազարգացած ու ամենահզօր երկիրներու համար ալ եւ իւրաքանչիւր երկիր իր պատկերացումացած ձեւով կամ կարողութեան սահմաններուն մէջ փորձեց պայքարիլ անոր դէմ: Կան երկիրներ, որոնք բաւական արդիւնաւէտ կերպով կրցան արագ վերահսկողութիւն սահմանել եւ սահմանափակել վտանգը, սակայն կան նաեւ երկիրներ, ուր հիւանդութիւնը տակաւին վերահսկողութենէ դուրս է: Դժբախտաբար, Հայաստանը վերջիններու շարքին կը պատկանի: Եթէ պիտի խօսինք պատասխանատուութեան մասին, ես կը կարծեմ, որ այսօրուայ ծանր իրավիճակին համար հաւասարապէս պատասխանատու են եւ՛ կառավարութիւնը եւ՛ ժողովուրդը: Նախ, ինչպէս



ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան Ատենապետ Համբիկ Սարաֆեան

թիւն սահմանել եւ սահմանափակել վտանգը, սակայն կան նաեւ երկիրներ, ուր հիւանդութիւնը տակաւին վերահսկողութենէ դուրս է: Դժբախտաբար, Հայաստանը վերջիններու շարքին կը պատկանի: Եթէ պիտի խօսինք պատասխանատուութեան մասին, ես կը կարծեմ, որ այսօրուայ ծանր իրավիճակին համար հաւասարապէս պատասխանատու են եւ՛ կառավարութիւնը եւ՛ ժողովուրդը: Նախ, ինչպէս

## Իլիամ Ալիեւ Դժգոհ է Միւսքի Խուճրէն. «Այսօր Փաստացի Բանակցութիւններ Չկան»

Ատրպէյճանի նախագահը քննադատած է ԵԱՀԿ (Եւրոպայի մէջ Անվտանգութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութիւն) Միւսքի խումբին, դարաբաղեան խնդրի վերաբերեալ, իր խօսքով՝ ոչ յստակ յայտարարութիւններու եւ անարդիւնք բանակցութիւններուն համար:

«Մենք անոնցմէ այլ արձագանք կ'ակնկալենք, յստակ յայտարարութիւններ: Երբ Հայաստանի վարչապետը կը յայտարարէ, որ Ղարաբաղը Հայաստան է, ինչո՞ւ Միւսքի խումբը չարձագանքեր եւ չի յայտարարեր, որ այդ արտայայտութիւնը ամբողջովին կը խախտէ բանակցութիւններու էութիւնը եւ զանոնք փաստացի կը դարձնէ անիմաստ», - հարց բարձրացուցած է Ալիեւը Ատրպէյճանական հեռուստաընկերութիւններու հետ զրոյցի ընթացքին:

Ատրպէյճանի նախագահը պնդած է, թէ միջնորդները համահունչ չեն արձագանքեր նաեւ բանակցութիւններու «ձեւաչափը փոխելու» հայկական կողմի ջանքերուն:

«Անոնք վերացական յայտարարութիւններ կ'ընեն, փորձելով եւ՛ մեզի սիրաշահիլ, եւ՛ անոնց, բայց անոր ժամանակը արդէն անցած է, մենք յստակութիւն կը



Ատրպէյճանի նախագահ Իլիամ Ալիեւ

պահանջենք», - ըսած է Ալիեւ, աւելցնելով, որ եթէ միջնորդները կ'ուզեն, որ հակամարտութիւնը լուծուի խաղաղ ճանապարհով, պէտք է խօսին այս մասին:

«Անոնց հիմնական թէզն է, թէ խնդիրը ռազմական լուծում չունի, իսկ ո՞վ ըսաւ», - յայտարարած է Ատրպէյճանի նախագահը ընդգծելով. - «Մենք միջնորդներէն աւելի լուրջ, յստակ ու նպատակային

Շար.ը էջ 13

շատ մը երկիրներու մէջ, Հայաստանի մէջ ալ սկզբնական շրջանին այդքան ալ մեծ մտահոգութիւն չկար հիւանդութեան նկատմամբ եւ կը կարծուէր, որ կրնայ նոյնիսկ Հայաստանի հասնիլ: Սակայն, հակառակ այն հանգամանքին, որ Հայաստանը երկու կողմէ պաշարուած երկիր է եւ միայն երկու նեղ անցանքի սահմաններ ունի, վարակը յամենայն դէպս հասաւ Հայաստան՝ թէ օդային եւ թէ ալ ցամաքային ճանապարհով: Իսկ հասնելէն յետոյ անոր դէմ առնուած միջոցառումները եւ քայլերը, ինչպէս ցոյց տուաւ ժամանակը, արդիւնաւէտ չէին: Հիմնական հարցը ուշացումով արտակարգ դրութիւն մտցնելն էր եւ յետոյ տնտեսական աղէտը կանխելու մտահոգութեամբ արագ վերաբացումը: Եթէ ասոր գումարենք մէկ կողմէն ժողովուրդի որոշ հատուածին անբացատրելիորէն անտարբեր մօտեցումը եւ միւս կողմէն հիւանդութեան շինծու ըլլալուն մասին ապա-

Շար.ը էջ 7

## Սպիտակ Տունը Թէկուզ Ակամայ՝ Օգտագործեց «Հայոց Ցեղասպանութիւն» Եզրը. The Washington Post



Սպիտակ տան խօսնակ՝ Քայլի Մըքեյն

Սպիտակ տան խօսնակ՝ Քայլի Մըքեյնին անուղղակիորէն ճանաչած է Հայոց ցեղասպանութիւնը, գրած է The Washington Post-ը:

Յուլիս 6-ին, Մըքեյնի յիշատակած է Հայոց ցեղասպանութիւնը. նախապէս Ամերիկայի Միացեալ Նահանգներու կառավարութիւնը կը հրաժարէր ճանաչել այս իրադարձութիւնը:

Հեղինակաւոր թերթը կը նշէ, որ հնարաւոր է, թէ ԱՄՆ-ի նախա-

Շար.ը էջ 13

# ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Քամի Ցանող Աղմկարարները

ԱՐՄԵՆ ՕՅԱՆԵԱՆ

Երբ ուղղակի մարդկանց հետ շփուելով հետեւում ես Հայաստանում տեղի ունեցող զարգացումներին, ապա տեսնում ես մի իրակա- նութիւն:

Երբ յանկարծ միացնում ես նախկին իշխանութիւններին սպա- սարկող հեռուստատեսային քննարկում ես նրանց մամուլը, կայքերը, լսում ես նրանց հարցազրոյցները, նայում ես սոցիալական ցանցերում այդ շրջանակների գրառումները, ուզում ես հնարաւորինս արագ (ցանկալի է՝ հեղափոխութեան) հաւաքել ճամպուրակ ու անգամ գործնաւորութեան համալիրակի եւ արտակարգ դրութեան ռեժիմի պայմաններում ոտքով փախչել, եւ ինչպէս յայտնի ֆիլմում է ասուում՝ «հասնել գոնէ մի քանի Գանատայի սահմանը»:

Որովհետեւ բոլոր այդ հար- թակներում, նոյն շրջանակներից, նոյն մարդիկ՝ երբեմն՝ նոյն շորե- րով (որովհետեւ մի կայքէջ այլ կայք էն ցատկել, կամ՝ մի ալիքից արագացուած կարգով տեղափոխ- ուել են այլ ալիք) մանտրայի պէս առաւօտից երեկոյ նոյնաբովան- դակ տեքստն են կրկնում: Մօտա- ւորապէս հասկանալի բովանդակու- թեամբ՝ «Մեր կողմից յեղաշրջ- մամբ «Ժառանգութիւն ստացած» գիողալ, ժողովրդավարական, գար-

հասկանում ես, որ չէ, այդ մարդիկ մեզ են գժի տեղ դրել:

Այն աստիճան երեսպաշտու- թեամբ ու փարիսեցիութեամբ, որ ակնյայտ է դառնում՝ նրանք ոչ էլ հակադարձման են սպասում, իմաստ էլ չունի խօսքերով հակադարձել: Որովհետեւ երեսպաշտութեան կար- միր գիծն այնքան են հատել, որ իրենց արած ցանկացած բան փաս- տերով թափահարես աչքերի առաջ, գոռալու են՝ սուտ է:

Որովհետեւ այդ մարդիկ հի- մա մեր՝ ժողովրդի անունից խօսե- լով, պահանջներ ու վերջնագրեր ներկայացնելով, իբր թէ՛ մեր խնդիրների համար են մտահոգ, իրականում ո՛չ մեր, ո՛չ էլ մեր կարծիքի կարիքն ունեն: Որովհե- տեւ յեղափոխութիւնից որոշ ժա- մանակ անց շունչ առնելուց յետոյ, երբ տեսան, որ իմբերով բանտե- րում մուգ թէյի յոյսին չեն մնացել, անկիւն քշուած գազանի պէս դուրս են եկել ամէն մէկն իր անկիւնից եւ ոճմակով յարձակուել են թէ՛ մեր՝ քաղաքացիներին վրայ (գոռալով՝ «այ ստրուկներ, դուք գոմպի էք, եթէ համաձայն չէք մեզ հետ, որ կարծանում էք»), թէ՛ իշխանու- թեան եւ թէ՛, որ ամենասարափե- լին է՝ պետութեան վրայ:

Լա՞ւ ենք ապրում մենք հիմա, թէ՛ ոչ, փոխուել է արդեօք մեր կեանքը, թէ՛ ոչ, գո՞հ ենք, թէ՛ գո՞հ չենք՝ դա ձեր գործը չէ, «յարգե-

«Քաղաքացիների աջակցութիւնը թուլանում կամ նուազում է այն պահերին, երբ ձեր նկատմամբ իշխանութեան կողմից կոշտ քայլեր չեն տեսնում, երբ դատարաններից ձեր ընկերներին ազատ են արձակում»:

զացած, հարուստ, ուժեղ, ինքնիշ- խան, աշխարհի նախանձի առար- կայ երկիրը երկու տարում կոր- ծանել էք, աւերել էք, մեր նման կիրթ, գրագէտ, պրոֆեսիոնալ, փոր- ձառու, հանրահռչակ, համբաւա- լոր, դրսում յարգանք վայելող, ազնիւ եւ անկաշառ, միայն երկրի դարդերի մասին մտածող (թէ՛ եւ մեր օրօք երկիրը դարդ չունէր), ազգասէր գործիչների փոխարէն երկիրը այսօր կառավարում են անփորձ, ոչնչից չհասկացող, կո- ռումպացուած, յանցագործ իշխա- նութիւնները: Եւ ուրեմն երկիրը պէտք է շտապ, շատ շտապ փրկել, պահանջում ենք՝ հեռացէք, արտա- հերթ ընտրութիւններ անցկաց- րեք, անցումային կառավարութիւն է պէտք, անդունդի եզրին ենք, կործանուել ենք»:

Ահա սա է երկու տարի նախ- կինների կողմից հնչեցուող տեքս- տերի համառոտագիրը:

Ճիշտ է, սկզբում շատերը մտածում էին՝ մերժուածներ են, էլի, պիտի մի բան խօսեն, յետոյ թէ՛ գժուել են, ինչ է: Իսկ հիմա, երբ ակնյայտ է, որ այդ մարդիկ այդ ամէնն ասում են դէմքի ամե- նայն լրջութեամբ, խօսքից ամէն պահի գործի անցնելու ակնյայտ մտադրութեամբ, ցինիզմի եւ երես- պաշտութեան գերդոգաւորմամբ,

լի» նախկիններ: Այո, իշխանութիւնները շատ սխալներ են արել, անում են եւ անելու են: Այո, կարող է եւ այնպիսի պահ լինի, որ քաղաքա- ցիները մեծամասնութիւնը որո- շի, որ այս իշխանութիւններից էլ գոհ չէ, եւ ուրիշներին տալ իր քուէն:

Բայց այս ամբողջ պատմու- թեան հետ դուք կապ չունէք: Աւելին, քանի դուք կաք ու խօսում էք, քանի յոխորտում էք՝ երբեմն- երբեմն ստիպելով իշխանութիւն- ներին կոշտացնել իրենց քայլերը, այ՛ հենց էդ պահերին քաղաքացի- ների աջակցութիւնն աւելի է մե- ծանում: Քաղաքացիների աջակ- ցութիւնը թուլանում կամ նուա- զում է այն պահերին, երբ ձեր նկատմամբ իշխանութեան կողմից կոշտ քայլեր չեն տեսնում, երբ դատարաններից ձեր «ընկերնե- րին» ազատ են արձակում:

Եւ ուրեմն, մի լայճ-հաք. եթէ իսկապէս այդքան շատ էք ուզում, որ այս իշխանութիւնների վարկա- նիշը նուազի, լուէք, կամ աւելի լաւ է՝ գովէք նրանց, շատ գովէք: Ճիշտ է, դա էլ չի նշանակում, որ այդ պարագայում քաղաքացիները ձեզ քուէ կը տան, բայց դա արդէն այլ պատմութիւն է:

«Ի ԼՈՒՐ»

## Ներքաղաքական Պայքարի Անուան Տակ

Առաջին հայեացքից կարող է թուալ, թէ Հայաստանում ներքա- ղաքական բուռն իրադարձութիւն- ներ են տեղի ունենում՝ ընդդիմու- թիւնը փորձում է համախմբուել եւ իշխանափոխութիւն իրականացնել, որովհետեւ համարում է, որ իշխա- նութիւնները սխալ ուղղութեամբ են տանում երկիրը, քարոզչական պայքարում աւելի ու աւելի կոշտ հռետորաբանութիւն է օգտագործ- ւում, իշխանութիւններն իրենց հեր- թին փորձում են մոբիլիզացնել բոլոր ներքին ռեսուրսները, եւ այլն: Իրականում Հայաստանում ընթացող «ներքաղաքական պայ- քարը» կարելի է բնութագրել մէկ նախադասութեամբ՝ յեղափոխական իշխանութիւնները փորձում են վե- րադարձնել տասնամեակներ շա- րունակ պետութիւնից ու ժողովր- դից թալանած միլիարտները, իսկ թալանողները դիմադրում են ու փորձում թոյլ չտալ: Սա է, ուրիշ բան չկայ: Այդ ամէնն, իհարկէ, փաթեթաւորում է քաղաքական կարգախօսներով, գումարուող «սխողկաները» յանուն պատշա- ճութեան ներկայացում են որպէս ներկուսակցական քննարկումներ կամ միջկուսակցական խորհր- դակցութիւններ, սեփականատիրոջ կամ ստուերային ֆինանսաւորողի անմիջական պատուէր կատարող լրատուամիջոցները ձեւացնում են, թէ իշխանութիւններին հաջողում են բացառապէս պետութեան եւ հասարակութեան շահերից ելնե- լով, բայց դրանից գործընթացի էությունը չի փոխուում. նպատակն ընդամէնը թալանածը պաշտպա- նելն ու պատասխանատուութիւնից խուսափելն է:

Ու քանի որ յանուն թալանա- ծը պաշտպանելու մղուող այդ կա- տաղի պայքարը քողարկում է «ներքաղաքական պայքարի» փա- թեթաւորմամբ, տրամաբանօրէն՝ հարցը պէտք է ներկայացնել այն- պէս, թէ իշխանութիւններն էլ թա- լանածը վերադարձնում են գոտ քաղաքական նկատառումներով: Պարզ ասած՝ պէտք է հանրութեա- նը ներշնչել, թէ իբր իշխանու- թիւնները նախկինում կատարած յանցանքների համար հետապնդում են միայն նրանց, ովքեր քաղաքա- կան չաւակնութիւններ ունեն եւ իշխանութիւնների համար որոշա- կի վտանգ են ներկայացնում, իսկ նրանք, ովքեր գլուխները կախ մի կողմ են քաշուել՝ դուրս են մնում իշխանութիւնների տեսադաշտից: Իրականում իշխանութիւնների մեղ- քը չէ, որ երկար տարիներ Հայաս- տանում գործել է մի համակարգ, որտեղ կամ երկիրը թալանելու համար անպայման պէտք էր մտնել քաղաքականութիւն ու դառնալ պե- տական պաշտօնեայ, կամ՝ եթէ ինչ- որ մէկը հարստացել էր այլ ճանա- պարհով, հարստութիւնը պահպա- նելու համար ստիպուած պիտի լինէր քաղաքական ծառայութիւն- ներ մատուցել իշխանութիւններին (այսինքն՝ գաղտնէլ քաղաքակա- նութեամբ): Հենց այդ համակարգն է պատճառը, որ այսօր նախկինում կատարուած ցանկացած մասշտա-

բային յանցագործութեան բացա- յայտում կարելի է ներկայացնել որպէս քաղաքական ենթատեքստ ունեցող: Աւելին՝ սա նաեւ «յետա- դարձ էֆեկտ» ունի, որովհետեւ ցանկացած ջեբկիր կամ մանր ժու- լիկ բռնութիւն պէս վազում-գտնում է որեւէ ընդդիմադիր լրատուա- միջոց ու տեսախցիկի առջեւ իրեն ներկայացնում որպէս ահաւոր սկզբունքային քաղաքական գոր- ծիչ ու քաղհալածեալ: Ընդ որում՝ սա վերաբերում է նաեւ նրանց, ովքեր կամ երբեւէ չեն գաղտնէլ քաղաքականութեամբ, կամ էլ առա- ջին անգամ քաղաքականութեան հետ առնչուել են յեղափոխութեան ժամանակ՝ բարտի բերմամբ թէ պատահմամբ յայտնուելով իշխա- նական որեւէ օղակում: Պատկերաց- նում էք, չէ՞, թէ ինչ գտածոներ են սրանք նախկինների համար:

Այս իրավիճակի հիմնական բացասական հետեւանքներից մէկն էլ այն է, որ յանուն թալանածը պաշտպանելու մղուող պայքարը որպէս «ներքաղաքական պայքար» ներկայացնելու արդիւնքում իրա- կան ներքաղաքական դաշտ չի ձե- ւաւորում: «Ներքաղաքական գոր- ծընթացներն» էլ սահմանափակ- ւում են նրանով, որ սոցիալապէս անապահով խմբերի ներկայացու- ցիչները չնչին օրապահիկի դիմաց ցոյցեր են անում ի պաշտպանու- թիւն տարիներ շարունակ իրենց հարստահարած մուտքի միջոցառու- րերի: Նրանց, ում հիմնական քա- ղաքականութիւնը եղել է հենց օրապահիկի կարօտ ու դրանով իսկ կառավարելի հասարակու- թիւն ունենալը:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՅԷ ԱՏԱՊԱՅԷԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party  
of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

**Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին**

**Massis2@earthlink.net**

**626-797-7680**

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնետ հոն արտայայտուող բոլոր միտքերը

# ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## «Մեր Երկրին Հարկաւոր Է Նոր Սահմանադրութիւն». Փաշինեան

Յուլիսի 5-ին Հայաստանի մէջ նշուեցաւ Սահմանադրութեան Օրը: Այս առթիւ իր շնորհաւորական իր խօսքին մէջ վարչապետ Նիկոլ Փաշինեան ըսաւ, որ Հայաստան պէտք ունի նոր Սահմանադրութեան:

Վարչապետը անդրադառնալով նախորդ երեք սահմանադրութիւններուն յայտնեց, որ Հայաստանի Երրորդ Հանրապետութեան պատմութեան մէջ երեք անգամ պաշտօնապէս արձանագրուած է, որ ժողովուրդը հանրաքուէով ընդունած է Սահմանադրութիւն, կամ սահմանադրական փոփոխութիւններ: «Բայց այդ հանրաքուէներէն ոչ մէկի արդիւնքները վստահելի չեն համարուել հանրութեան կողմից: Հայաստանի քաղաքացիները իրենցը չեն համարել Սահմանադրութիւն ընդունելու կամ փոփոխելու որոշումը, իրենցը չեն համարել նաեւ այդ որոշումները արդիւնքում ընդունուած Սահմանադրութիւնը»:

«Սա մեր պետական կառուցիչ ամենամեծ համակարգային թերութիւնն է, որովհետեւ Սահմանադրութիւնը, ըստ էութեան, քաղաքացիների պայմանաւորուածութիւն պիտի լինի քաղաքացի-քաղաքացի, պետութիւն-քաղաքացի յարաբերութիւնների մասին», - ըստուած է վարչապետի խօսքին մէջ»:

Նիկոլ Փաշինեան ընդգծեց որ, հակառակ իր այն դիրքորոշումին, որ Սահմանադրութեան յաճախակի փոփոխութիւնները անհարկի

ճնշումի կ'ենթարկեն պետական համակարգը, Սահմանադրութեան անընդհատ փոփոխութիւնները կը բերեն անորոշութիւններու, վերոնշեալ հանգամանքներու գիտակցումը իրեն բերած են այն եզրակացութեան, որ երկրին հարկաւոր է նոր Սահմանադրութիւն, որ քաղաքացիներու կամքի վրայ յենուած, քաղաքացիներու կամքէն բխող պետական կարգ կը հաստատի Հայաստանի մէջ:

«Նոր Սահմանադրութիւնը, ըստ այդմ, պէտք է ստեղծուի ոչ թէ կոնկրետ անձի, անձանց, քաղաքական ուժի կամ խմբի ճաշակով ու «հագով», ոչ թէ որեւէ իշխանութեան վերարտադրութիւնն ապահովելու նպատակ պէտք է ունենայ, այլ ժողովրդի իշխանութիւնն ամրացնելու, ժողովրդի կամքից բխող պետական կարգ ունենալու ու պետութիւն ունենալու քաղաքացիների կամքն արտայայտելու ռազմավարական հարցը պէտք է լուծի»:

«Այս գործընթացը մեկնարկած է, յոյս ունենք՝ նոր Սահմանադրութեան նախագծի ձեւաւորումը կ'անցնի հնարաւորինս լայն հանրային քննարկում եւ 2021 թուականին կայանալիք հանրաքուէով կ'ընդունուի ժողովրդի ազատ կամարտայայտմամբ», - ըստուած է վարչապետի խօսքին մէջ:

Հայաստանի առաջին Սահմանադրութիւնը ընդունուած է 1995 թուականի Յուլիսի 5-ի համաժողովրդական հանրաքուէով եւ ապա փոփոխութեան ենթարկուած է՝ 2005 եւ 2015 թուականներուն:

## Մենաշնորհային Երեւոյթները Մեղմացած Են, Բայց Վերացած Չեն. Փաշինեան

Որքան ալ ըսենք, որ 2018-էն յետոյ մենաշնորհային երեւոյթները, մասնաւորապէս, նախամթերքի շուկային մէջ, մեղմացած են, բայց այդ չի նշանակեր, որ վերացած են: Այս մասին, այսօր՝ Յուլիս 2-ին, կառավարութեան նիստին յայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Այստեղ մեր սպառողների իրաւունքները պաշտպանելու, նաեւ մրցակցութիւնը խթանելու հետ կապուած շատ անելիք ունենք: Ես տեղեկ եմ, որ ՏՄՊՊՀ-ն (Տնտեսական Մրցակցութեան Պաշտպանութեան Պետական Յանձնաժողով) նոյնպէս լրջօրէն զբաղուած է այս հարցով: Մենք պէտք է ՀՀ-ից մինչեւ վերջ եւ անմնացորդ որեւէ

արհեստական մենաշնորհ թող չտանք: Մարդիկ պէտք է հնարաւորութիւն ունենան որակեալ եւ հնարաւորինս էժան ապրանք ձեռք բերել:

2018-էն յետոյ ե՛ւ պենզինի, ե՛ւ տիգլաքոնիքի ներկրողների քանակը մեծացել է եւ մենք տեսնում ենք, թէ ինչպիսի արագութեամբ է մեր շուկան արձագանգում միջազգային գների փոփոխութիւններին: Նախկինում շուկան գների բարձրացմանը շատ արագ էր արձագանգում, իսկ գների իջեցմանը շատ դժկամութեամբ էր արձագանգում: Հիմա նոյնպիսի արագութեամբ են արձագանգում թէ գների նուազմանը, թէ բարձրացմանը», - ըսաւ Փաշինեան:

## ԼՂԿ-ն ու ԲՀԿ-ն Դիմած Են Համավարակի Դեմ Պայքարի Հանգամանքները Քննող Յանձնաժողով Ստեղծելու Համար

Ազգային ժողովի ընդգիծադիր՝ «Բարգաւաճ Հայաստան» եւ «Լուսաւոր Հայաստան» երկու խմբակցութիւններու պատգամաւորները ԱԺ-ի նախագահ՝ Արարատ Միրզոյեանին ուղարկած են նոր «Քորոնա» ժահրի տարածումը կանխելու, այդ ժահրի դէմ պայքարի, համաճարակի հետեւանքներու մեղմացման կամ վերացման ուղղութեամբ կառավարութեան եւ պարէտատան կատարած միջոցառումներու արդիւնաւէտութիւնը ուսումնասիրող ԱԺ-ի քննիչ յանձնաժողով ստեղծելու մասին դիմում: Այս մասին ֆէյսպուքեան գրառումով յայտնած է Լուսաւոր Հայաստան կուսակցութեան խմբակցութեան ղեկավար՝ Էտմոն Մարուքեան:

Ան նշած է, որ յանձնաժողովը պէտք է ուսումնասիրէ նաեւ արտակարգ դրութեան ժամանակամիջոցին մարդու իրաւունքներու եւ հիմնարար ազատութիւններու սահմանափակումներու արդիւնաւէտութիւնն ու իրաւաչափութիւնը:

Պատգամաւորին փոխանցումով՝ ստեղծուող քննիչ յանձնաժողովը կը նախագահէ «Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան Արքատի Սաչատրեան:

## Հարցախոյզի Համաձայն 88,1%-ը Դրական կը Գնահատէ ՀՀ Վարչապետի Գործելաճը



Հայաստանի մէջ տեղի ունեցած հարցման, մասնակիցներուն 88,1%-ը դրական կը գնահատէ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի գործելաճը:

«Արմէնփրես»-ի փոխանցումով՝ այս մասին մամուլի ասուլիսի ընթացքին, ըսած է «GALLUP International Association»-ի Հայաստանի լիիրաւ անդամ «Էմ Փի ձի» ՍՊԸ տնօրէն Արամ Նաւասարդեան:

«Հարցուածների 49,4%-ը լիովին դրական է գնահատում Նիկոլ Փաշինեանի գործունէութիւնը, աւելի շուտ դրական է գնահատում 38,7%-ը», - նշեց Նաւասարդեան:

Արման Նաւասարդեանի խօսքով՝ հարցման մասնակիցներու 18,4%-ը նշած է, որ Փաշինեանին, վարչապետ ընտրուելէն յետոյ, իր սպասելիքները ամբողջութեամբ արդարացած են, իսկ 66,7%-ը նշած է, որ որոշ չափով արդարացած են, որ

«Քաղաքացիներուն խնդրել ենք նաեւ պատասխանել այն հարցին, թէ ինչպէս էք գնահատում Նիկոլ Փաշինեանին՝ որպէս քաղաքական գործչի. հարցուածների 53,9%-ը նշել է՝ լիովին դրական,

34,6%-ը՝ աւելի շուտ դրական», - նշեց Արամ Նաւասարդեան:

«Քաղաքացիներին խնդրել ենք պատասխանել այն հարցին, թէ ինչպէս են գնահատում ներքոյն քաղաքացիների գործունէութիւնը. ընդդիմութեան գործունէութեանը հաւանութիւն է տալիս հարցուածների 22,7%-ը, Ազգային ժողովի գործունէութեանը՝ 54,7%-ը, կառավարութեան գործունէութեանը՝ 67,9%-ը, նախագահի գործունէութեանը՝ 79,3%, վարչապետի գործունէութեանը՝ 85%-ը», - ըսաւ Նաւասարդեան:

Հարցումները կատարուած են հեռախօսազանգերու միջոցով: Հարցման մասնակիցներու քանակը 1002 անձ է: Հետազոտութեան այլ լրնարանքային սխալը՝ 3%: Ընտրանքը ներկայացուցչական է, ըստ Հայաստանի Հանրապետութեան տարբեր սեռի տարիքի ինչպէս նաեւ բնակութեան վայրին:

Հետազոտութիւնը կատարուած է Յունիս 10-27-ի միջեւ:

Ընդդիմութիւնը չի հաւատար այս թիւերուն ու կը շարունակէ պնդել որ, Փաշինեանի ժողովրդականութիւնը մեծ անկում արձանագրած է:

## Ատրպէյճանի Յատուկ Ծառայութիւնները Փորձած Են Տեղեկութիւններ Կորզել ՀՀ Զինուած Ուժերու Վերաբերեալ

Հայաստանի Ազգային Անվտանգութեան ծառայութիւնը (ԱԱՄ) յայտնած է, որ Ատրպէյճանի Հանրապետութեան յատուկ ծառայութիւններու «արհեստավարժ հետախոյզները», հաւատարիմ մնալով իրենց բնորոշ պարզունակ գործելաճին եւ օգտագործելով արդի տեղեկատուական արդիւնաբերական հնարաւորութիւնները, կը շարունակեն համացանցի ընկերային համացանցերուն վրայ գրանցել արտասահման բնակող հայերու անուններով կեղծ էջեր եւ ներկայանալով, որպէս գործարար բարերարներ, կամ ՀՀ ՁՈւ նախկին գինձառայողներ, ծանօթութիւններ կը հաստատեն հայ գինձառայող օգտատէրերու, կամ անոնց հարազատներուն հետ ու շփումների ընթացքին կը փորձեն կորզել ռազմական բնոյթի տեղեկութիւններ:

Ըստ ԱԱՄ-ին՝ ՀՀ Զինուած Ուժերուն մէջ դեռեւս կան առանձին գինձառայողներ, անոնց կարգին՝ հրամանատարական կազմի շրջանակին մէջ, որոնք միամտօրէն կարծելով, որ կը հաղորդակցին իրենց նախկին ծառայակիցներուն կամ ենթականերուն հետ, նամակագրութիւններու ընթացքին կը քննարկեն գինուորական ծառայութեան վերաբերող հարցեր:

Ձեռնարկուած հետախուզա-



կան միջոցառումներու ընթացքին պարզուած է, որ Ատրպէյճանի յատուկ ծառայութիւններու աշխատակից-օգտատէրը, Facebook ընկերային ցանցին մէջ գրանցուած մտացածին էջով (կեղծ) նամակագրական կապեր հաստատած է Հայաստանի գինուած ուժերու բարձրաստիճան սպայի հետ եւ փորձած է անկէ կորզել տեղեկութիւններ ՁՈւ-ի վերաբերեալ:

Ազգային անվտանգութեան ծառայութիւնը կը յորդորէ ՀՀ քաղաքացիներուն՝ յատկապէս գինձառայողներուն, գերծ մնալ ընկերային ցանցերով անձանօթ օգտատէրերու հետ շփումներից եւ չքննարկել գինուորական ծառայութեան վերաբերող թեմաներ:

# ԼՈՒՐԵՐ

## Արցախի ժողովուրդը Այլևս Երբեք Պիտի Չենթարկուի Այն Վտանգներուն, Որ Տեսած է 90-ականներուն. Զ. Մնացականեան

Արցախի ժողովուրդը այլևս երբեք պիտի չենթարկուի այն վտանգներուն, որ Արցախի ժողովուրդը տեսած է 90-ականներուն: Այս մասին Արցախի հեռուստաընկերութեան տուած հարցազրոյցին նշած է Հայաստանի Արտաքին Գործոց նախարար Զոհրապ Մնացականեան:

«Չմոռանանք՝ ինչ իրավիճակներ են եղել Արցախի անվտանգութեան համար 1992 թուականին, 1993 թուականին: Ինչպէս է այդ շարունակական սպառնալիքն արտայայտուած տարբեր ժամանակահատուածներում: Լինի դա ատելութեան, հայատեացութեան քաղաքականութիւնը, այդ մտեցումների արտայայտումը խաղաղ գործընթացներում, դժուար աւելի ծայրայեղ արտայայտումները, ինչպէս եղան 2016 թուականի Ապրիլին:

Սա շարունակական յիշեցումն է, որ սպառնալիքը իրական է. սպառնալիքը գոյութիւն ունի, եւ անվտանգութեան բաղադրիչի գերակայութիւնն առաւել քան արտայայտուած է՝ անկախ նրանից, թէ որ շրջանին է դա վերաբերում: Սպառնալիքը, դժբախտաբար, մնում է չափազանց տեսանելի գործօն: Եւ մեզ համար սա գերակայ խնդիրներէն մէկն է:

Դրան զուգահեռ՝ Արցախի ինքնորոշման իրաւունքը, ազատ ապրելու իրաւունքը եղել եւ մնում է մեր գերակայ խնդիրներից մէկը: Մենք այս շրջանակներում շարունակելու ենք աշխատել խաղաղ գործընթացի շրջանակներում, Մինսքի համանախագահութեան հովանու ներքոյ բանակցել միւս կողմի հետ:

Զի կարող լինել մի իրավիճակ, երբ որեւէ կերպ վտանգի տակ դրուեն այն գերակայութիւնները, որոնց մասին ես խօսեցի: Վտանգի տակ դրուի Արցախի բնակչութեան, Արցախում ապրող մարդու անվտանգութիւնը, Արցախում բնակչուող մարդու իրաւունքների արտայայտումը՝ սկսած կեանքի իրաւունքի պաշտպանութիւնից մինչեւ հաւաքական ինքնորոշման իրաւունքի արտայայտումը», - ըսաւ Մնացականեան:

Նախարարը անդրադարձաւ նաեւ Արցախի մէջ վերջերս տեղի ունեցած ԱԺ-ի եւ նախագահի ընտրութիւններուն, նշելով. «Արցախի ժողովրդի՝ վերջերս կայացրած ընտրութիւնները նոյնպէս արտայայտեցին մի կարեւոր բան, որ



Հայաստանի Արտաքին Գործոց նախարար Զոհրապ Մնացականեան

Արցախի ժողովուրդը իր ինքնորոշման իրաւունքի իրականացումն արտայայտում եւ ապահովում է ամենայն լրջութեամբ եւ պատասխանատուութեամբ: Դրա արտայայտութիւնն էին ընտրութիւնները, որ տեղի ունեցան, այդ մրցակցային ժողովրդավարական միջավայրը, որտեղ արտայայտուեց՝ որ քան լուրջ է Արցախը վերաբերում այն հարցին, որն առնչուած է իրաւունքների, ազատութիւնների, ժողովրդավարական արժէքների հիման վրայ ներկան եւ ապագան կառուցելու այդ վճռականութեանը:

Երեսուն տարուայ ընթացքում Արցախն առաւել քան յստակօրէն արտայայտել է յանձնառութիւնը եւ կարողութիւնը՝ կառուցելու համակարգ, որի հիմքում դրուած է մարդը՝ իր ամբողջ իրաւունքներով, ազատութիւններով: Սա շատ էական է եւ առաւել եւս ամրապնդում է այն կարեւոր պատգամը, որ Արցախը վաստակել է իր իրաւունքը՝ ինքնորոշումը իրականացնելու ամենայն լրջութեամբ եւ պատասխանատուութեամբ:

Ուզում եմ ընդգծել՝ որ քան կարեւոր է այսօրուայ հանդիպումը Հանրապետութեան նախագահի՝ պարոն Արայիկ ԅարութիւնեանի հետ եւ այն քննարկումները, որ մենք ունեցանք. դրանք առաւել համալրում են մեր աշխատանքը խաղաղ բանակցային գործընթացում: Նաեւ շատ էական էր մտքերի փոխանակումն Ազգային ժողովում՝ նորընտիր նախագահի եւ պատգամաւորների հետ»:

## Լիազօրութիւնները Դադրեցուած Սահմանադրական Դատարանի Անդամներու Գանձատը Հասած է ՄԻԵԴ

Սահմանադրական Դատարանի դատաւորներ՝ Ալվինա Կիւլումեանը, Ֆելիքս Թոխեանը, Հրանդ Նազարեանը եւ ՄԴ-ի նախագահ՝ Հրայր Թովմասեանը, որոնց լիազօրութիւնները դադրեցուած են խորհրդարանի կողմէ ընդունուած սահմանադրական փոփոխութիւններէն յետոյ, Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանին (ՄԻԵԴ) գանձատ ներկայացուցած են: Անոնք կը պնդեն, որ իրենց իրաւունքները խախտուած են եւ կը պահանջեն կառավարութեան պարտաւորեցնել որոշակի գործողութիւններ ընելու: ՄԴ-ի դատաւորները նաեւ խնդրած են, որ ՄԻԵԴ-ն կիրառէ հայցի ժամանակաւոր միջոցներ, ինչ որ կը նշանակէ, որ ՄԻԵԴ-ը գանձատը կը քննէ արագացուած ընթացակարգով եւ իր դիրքորոշումը կը ներկայացնէ առաջիկայ օրերու ընթացքին:



## Հայաստանի Սեչ Պիտի Արտադրուի Տարեկան 50 Հազար «Քալաշնիքով» Ինքնաձիգ



Վարչապետ Նիկոլ Փաշինեան կ'այցելէ Հայաստանի մէջ բացուած «Քալաշնիքով» ինքնաձիգի արտադրամաս

Վարչապետ Նիկոլ Փաշինեան, Պաշտպանութեան նախարար՝ Դաւիթ Տոնոյեանի եւ Բարձր արդիւնաբերութեան նախարար՝ Յակոբ Արշակեանի ուղեկցութեամբ այցելած է Հայաստանի մէջ բացուած «Քալաշնիքով» ինքնաձիգի արտադրամասը: Վարչապետը շրջաց կատարած է «Նեյթրոն ԳԱՄ» ՓԲԸ (Փակ բաժնետիրական ընկերութիւն) գործարանի կայանին վրայ հիմնուած «ԱԲ-103 Քալաշնիքով» ինքնաձիգի հաւաքման արտադրամասը եւ ծանօթացած արտադրական գործընթացին: Շրջացին մասնակցած է նաեւ Հայաստանի մօտ Ռուսաստանի Դաշնութեան արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Սերկէյ Բոփիրքինը:

Վարչապետը տեղեկացուած է, որ արտադրամասը պիտի արտադրէ տարեկան 50 հազար միաւոր ինքնաձիգ: Նախատեսուած է նաեւ մանրաթելերու, ինչպէս նաեւ մանրաթելէն տարբեր իրերու արտադրութիւն:

Մասնաւորապէս, այստեղ պի-

տի արտադրուին տեսողական-էլեկտրոնային սարքեր, գիշերային շերմային նշանոցներ: Ամբողջական փորձարկումէն յետոյ պիտի սկսի արտադրութիւնը եւ մէկ տարուայ ընթացքին պիտի բաւարարէ ՀՀ Պաշտպանութեան նախարարութեան պահանջարկը:

Հայաստանի մէջ ռուսական յայտնի ինքնաձիգի արտադրութեան համաձայնագիրը ստորագրուած է 2018 թուականի Օգոստոսին՝ «Royalsys Engineering Ltd.» ընկերութեան եւ «Քալաշնիքով» գործարանին միջեւ: Արտադրանքէն մաս մը պիտի համալրէ ՀՀ Զինուած ուժերը, իսկ միւսը՝ պիտի արտահանուի:

Վարչապետ Փաշինեան կարեւորած է մեր երկրին մէջ «Քալաշնիքով» ինքնաձիգի արտադրութեան հիմնադրութիւնը եւ գայն զնաստած է Հայաստանի եւ եւ Ռուսաստանի միջեւ ռազմարդիւնաբերութեան ոլորտին մէջ սերտ համագործակցութեան արդիւնք:

## Նիկոլ Փաշինեանի Շնորհաւորական Ուղերձ Յղած է Վլատիմիր Փուլինին

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան շնորհաւորական ուղերձ յղած է Ռուսաստանի Դաշնութեան նախագահ՝ Վլատիմիր Փուլինին: Այս մասին յայտնած են կառավարութեան տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու վարչութեան:



Ուղերձին մէջ, մասնաւորապէս, ըսուած է.

«Վարչապետ Նիկոլ Փաշինեանի շնորհաւորական ուղերձը Ռուսաստանի Դաշնութեան նախագահ՝ Վլատիմիր Փուլինին Յարգելի Վլատիմիր Վլատիմիրի,

Շնորհաւորում եմ Ձեզ՝ Ռուսաստանի Դաշնութեան Սահմանադրութեան մէջ փոփոխութիւնների հաստատման վերաբերեալ համառուական քուէարկութիւնը յաջող անցկացնելու կապակցութեամբ:

Այս իրադարձութիւնը, ի հարկէ, սկզբունքային նշանակութիւն

ունէր Ռուսաստանի պետականութեան հետագայ ամրապնդման համար: Վստահ եմ, որ երկրի հիմնական օրէնքի մէջ կատարուող փոփոխութիւնները, որոնք արժանացել են Ռուսաստանի հասարակութեան ճշտող մեծամասնութեան հաւանութեանը, ստեղծում են երկրի հետագայ առաջընթացի եւ նրա ընկերա-տնտեսական զարգացման համար նպաստող պայմաններ:

Մաղթում եմ Ձեզ եւ Ռուսաստանի Դաշնութեան եղբայրական ժողովրդին խաղաղութիւն, բարեկեցութիւն եւ բարգաւաճում»:

# Հանրային Հեռուստաընկերութեան Անդրադարձը Ռուսաստանեան Քուէարկութեան, Սուր Բանավէճ Յարուցած Է



Ռուսաստանի սահմանադրական փոփոխութիւններու մասին Հայաստանի Հանրային հեռուստաընկերութեան ցուցադրած տեսանիւթէն յետոյ, Հայաստանեան որոշ փոքրաթիւ ընդդիմադիր ուժերու կողմէ բարձրացուցած աղմուկը ընդամենը ցոյց կու տայ նախկին իշխանութեան մաս կազմած այդ ուժերու աշխարհայեացքը, թէ Հայաստանը ինչո՞ք եւ ամուլ առարկայ է, որուն տարբեր երկիրներ պէտք է պատժեն. «Ազատութեան» հետ զրոյցին, նման կարծիք յայտնեց Ազգային ժողովի Արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովի նախագահ, իշխող «Իմ քայլը» խմբակցութեան անդամ՝ Ռուբէն Ռուբինեան:

Ռուբինեան «չատ բարձր մակարդակի վրայ գտնուող» բնութագրեց հայ-ռուսական յարաբերութիւնները, որոնք կը շարունակեն զարգանալ. - «Հայաստանում հակառուսական տրամադրութիւններ չկան, չեն լինելու, եւ ոչ ոք չի հրահրում, չի էլ կարող հրահրել Հայաստանում հակառուսական օրակարգեր: Իսկ ինչ վերաբերում է այն փոքր ընդդիմադիր շրջանակներին Հայաստանի, որոնք արդէն երկու տարի, յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ պարբերաբար գոլժում են հայ-ամերիկեան, հայ-եւրոպական, հայ-ռուսական, հայ-չինական, հայ-իրանական յարաբերութիւնների տապալում, կամ գոլժում են, որ նշածս երկրները պիտի մեզ պատժեն եւ այլն եւ այլն, սա ցոյց է տալիս այս ուժերի աշխարհայեացքը, ըստ որի Հայաստանը մի խեղճ, ամուլ առարկայ է, կրակորական առարկայ է, որին ուղղակի պէտք է պատժեն ով հասնի: Ես կարծում եմ, սա մերժելի աշխարհայեացք է: Հայ-ռուսական յարաբերութիւնները շատ բարձր մակարդակի վրայ են գտնուում, դրանք շարունակում են զարգանալ ինչպէս երկկողմ, այնպէս էլ բազմակողմ ձեւաչափերով»:

Ռուսաստանի մէջ սահմանադրական փոփոխութիւններուն եօթօր տեւող հանրաքուէի վերջին օրը՝ Յունիս 1-ին, Հայաստանի հանրային հեռուստաընկերութիւնը եթեր հեռարձակեց տեսանիւթ մը, ուր ներկայացուած էին փոփոխութիւններուն կողմ եւ դէմ կարծիքներ, ներառեալ Ռուսաստանի նախագահ՝ Փութինի եւ Քրեմլինի սուր քննադատ՝ Նաւալնիի խօսքերը: 3 րոպէ 7 երկվայրկեան տեւողութեամբ տեսանիւթին մէջ, Նաւալնիին հատուածը 28 երկվայրկեան էր:

Այս հանգամանքը առաջացուց ռուսաստանեան պետական Russia-1 հեռուստաընկերութեան

հաղորդավար, Քրեմլինի խօսնակը համարուող՝ Վլատիմիր Սոլովյովի անթաքոյց գայրոյթը, թէ Հայաստանի հանրային հեռուստաընկերութիւնը ինչպէս համարձակած է եթեր տրամադրել Ալեքսեյ Նաւալնիին, թէեւ օրեր առաջ նոյնը ըրած էր Russia-1-ը:

Երեւանի մամուլի ակումբի նախագահ՝ Պորիս Նաւասարդեան որոշակի խնդիրներ կը տեսնէ, քանի որ տեսանիւթը հեռարձակուեցաւ, երբ Ռուսաստանի մէջ քուէարկութիւնը դեռ կը շարունակուէր. - «Աւելի նպատակայարմար կը լինէր, որ այդ պահին լինէր զուտ իրադարձային լուսաբանում, այլ ոչ թէ այնպիսի բովանդակութիւն, որը մասամբ արդէն ամփոփում է տեղի ունեցածը: Այդ ամփոփումը կարող էր աւելի ուշ լինէր եւ էլի ներառէր իր մէջ տարբեր կարծիքներ: Ինչ վերաբերում է նրան, որ որպէս հիմնական ընդդիմախօս այնտեղ ներկայացուեց Նաւալնին, այստեղ էլ, կարծում եմ, պէտք է հաշուի առնուեր առաջին հերթին Հանրային հեռուստառատիւններութեան լսարանի շահերը»:

Թէ Սոլովյովը ինչպէս տեղեկացած է հայերէն տեսանիւթի մասին, յայտնի չէ: Փոխարէնը անոր խօսքերու տեսանիւթը, ընկերային ցանցերու հայկական հատուածին մէջ սկսան տարածել հայաստանեան ընդդիմադիր քաղաքական ուժերու ներկայացուցիչները: Օրինակ, Երեւանի աւագանիի «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան քարտուղար՝ Հռիփսիմէ Առաքելեանը, որ թաւշեայ յեղափոխութեան նախորդ շրջանին հանրապետական կարէն կարապետեանի կառավարութեան մէջ կը գլխավորէր գործադիր տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու վարչութիւնը:

Ժամեր անց, թեման շարունակեց ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկեանը, որու հայաստանեան իրաւապահները կը մեղադրեն ընտրակաշառք տալու կազմակերպելու մէջ:

«Հայաստանում տեղի է ունենում հակառուսական տրամադրութիւնների արհեստական սրացում, որոնք մեր երկրում աշխուժօրէն իրագործուում են հակահայկական եւ հակապետական ուժերի աշխուժանքերով», - մասնաւորապէս գրած է Ծառուկեան, խոստանալով ընել ամէն ինչ այդ սաղրանքները կանխելու համար:

«Յանուն Հանրապետութեան» քաղաքական նախաձեռնութեան անդամ՝ Ռուբէն Մեհրապեանի համոզումով, անկախութեան գրեթէ երեսուն տարի անց ալ Հայաստանի մէջ կան քաղաքական ուժեր, որոնք

# Հայաստանը գնած է «Ռեմտեսիվիր» դեղամիջոցի խմբաքանակ



Հայաստան հակաժահրային «Ռեմտեսիվիր» դեղամիջոցի խմբաքանակ գնած է, որ երկիր կը հասնի մօտ 10 օրէն, յայտարարեց առողջապահութեան նախարար Արսէն Թորոսեան:

Ըստ մասնագէտներուն՝ «Ռեմտեսիվիրը» կը զսպէ ժահրին բազմանալու համար անհրաժեշտ ներխմորը եւ այդպիսով կը կասեցնէ հիւանդութեան հետագայ զարգացումը: Այս տարուայ ընթացքին, տարբեր երկրներու մէջ փորձնական կարգով «Ռեմտեսիվիր» ներարկած են նոր «Քորոնա» ժահրով ախտահարուածներուն: Արդիւնքը կը վկայէ դեղամիջոցի բաւական բարձր արդիւնաւէտութեան մասին: Ըստ Ամերիկայի Միացեալ Նահանգներու առողջապահութեան ազգային ինսթիթուտի ապրիլեան զեկոյցին, «Ռեմտեսիվիր»-ի շնորհիւ, Covid-19-ով հիւանդը միջին հաշուով 15 օրուայ փոխարէն 11 օր մնացած է հիւանդանոց:

Ինչ կը վերաբերի պատուաստին, Թորոսեան ըսաւ, որ անոնք պիտի գտնուին եւ միակ միջոցն են, թոյլ տալու վերադառնալու առանց դիմակներու կեանքին: Այս պահուն, աշխարհին մէջ կը մշակուի մօտ 200 պատուաստանիւթ, որոնցմէ 20-ը մեծ հնարաւորութիւն ունին դառնալու վերջնական արտադրանք, նշեց նախարարը, աւելցնելով, որ Հայաստանի կառավարութիւնը եւս բանակցութիւններ կը վարէ արտադրողներու եւ միջազգային կազմակերպութիւններու հետ:

«Բոլորը փորձում են դեռ չարտադրուած եւ դեռ չհաստատուած պատուաստանիւթերի խմբաքանակներ գնել, նոյնիսկ, տարբեր տեղեկութիւններով, գումարը նախապէս վճարելով: Ի հարկէ, բանակցութիւնների մեծ մասը գաղտ-

նիութեան քողի տակ են գնում, սակայն մենք որոշել ենք առնուազն սկսել այդպիսի խօսակցութիւններ թէ՛ ուղիղ արտադրողների հետ, որից մէկի մասին խօսեցինք, թէ՛ հաւաքական գնորդների հետ, ինչպիսիք են, ԵՈՒՆԻՍԵԾ-ը, ԱՀԿ-ն (Առողջապահութեան Համաշխարհային կազմակերպութիւն), ԳԱՎԻ-ն (Պատուաստումներու եւ պատուաստանիւթերու համաշխարհային դաշինք), որոնք կարող են միանգամից 100 երկրի համար գնել մեծ խմբաքանակ եւ հաւասարաչափ բաշխել», - նշեց Թորոսեան:

Նախարարը նշեց, որ առաջիկային, պետական պատուէրի ծիրէն ներս կատարուած հետազոտութիւններու քանակը կը հասնի օրական մօտ 3000-ի: Անոր գուճահետ աշխատող մասնաւոր տարրալուծարաններու հետազոտութիւններու թիւն ալ միասին, հնարաւոր է, որ օրական տեղի ունենայ 4000 հետազոտութիւն: Կ'աւելնայ նաեւ տարրալուծարաններուն թիւը: Այժմ կը կատարուի մինչեւ 2500 հետազոտութիւն:

Թորոսեան ըսաւ, որ հիւանդանոցներուն մէջ ազատ մահճակալներու խնդիրը տակաւին առկայ է կը մնայ զբաղուած: Այդ իսկ պատճառով՝ «Քորոնա» ժահրի հիւանդութեան դէմ պայքարին կը միանան նաեւ նոր հիւանդանոցներ:

Արդեօք կրկնակի վարակի դէպքեր կը պատահի՞ն, հարցին պատասխանը դեռ չկայ: Հայաստանի մէջ մինչ այս պահը, նախարարի տեղեկացումով՝ նման դէպք արձանագրուած չէ: Ան ըսաւ, որ առնուազն պէտք է զգոյշ ըլլալ, քանի որ նոյնիսկ, եթէ մարդը վարակուած ու ապաքինուած է, այդ դեռ 100 տոկոսանոց երաշխիք չէ, որ երկրորդ անգամ չվարակուի:

Ռուսաստանի հետ յարաբերութեանց մէջ Հայաստանը կը պատկերացնեն որպէս վասալային երկիր մը. - «Նրանք ըստ էութեան գուրկ են քաղաքական որեւէ բովանդակութիւնից, նրանք միայն գերի են

իրենց պատկերացումներին, ըստ որի Հայաստանը կարող է միայն ստորաքարշ վասալի կարգավիճակում գոյատեւել: Գոնէ այս վերջին տարիներին նրանց դաւանած փիլիսոփայութիւնը հենց դա է եղել»:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
 ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**(626) 797-7680**

### ՄԴՅԿ Լիբանանի Ատենապետ Սեպուհ Գալիփաբեան. «Ժամանակն է, Որ Այս Կառավարութիւնը Հրաժարի»

Լիբանանի մէջ օր ըստ օրէ բազմացող ելեւմտատնտեսական խնդիրները եւ արագ անկում ապրող կենցաղային կացութիւնը մեկնաբանելու, լուծումի հաւանական միջոցները պարզաբանելու նպատակով, «Արարատ» օրաթերթը կապ հաստատած է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Սեպուհ Գալիփաբեանի հետ, խնդրելով լսել երկրէն տիրող իրավիճակի մասին անոր տեսակէտները:



ՄԴՅԿ Լիբանանի ատենապետ Սեպուհ Գալիփաբեան

«Հանրային ծառայութիւններու բացակայութիւն, լիբանանեան լիբալի աննախադէպ արժեքը կում, սպառողական նիւթերու անտանելի սղաճ, հաստատութիւններու փակում եւ շուկաներու դատարկում, ելեկտրականութեան վատթարացում, ընկերային լուջ խնդիրներու յայտնութիւն», ըսած է Ընկ. Գալիփաբեան, թուելով այսօր լիբանանցիներուն դիմագրաւած հարցերուն միայն մէկ մասը: Ան ցաւ յայտնած է Լիբանանի մէջ տիրող ահաւոր կացութեան համար ու բացատրած է, որ այս բնական արդիւնք է, մէկ կողմէ երկիրը տնօրինող յարանուանական դրութեան եւ տնտեսական թերութիւններու, միւս կողմէ՝ 2018-ին ընտրական շինծու օրէնքով տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններուն հիման վրայ ձեւաւորուած իշխանութեան, որ իր քաղաքականութիւնները հիմնեց վրէժխնդրութեան, այլամերժութեան, բացառապէս կողմնակալութեան, յարանուանական աժան քարոզչութեան վրայ, յուսահատութեան եզրին հասցնելով քաղաքացին եւ փրկելով երկիրը կանգուն պահող սիւները:

կառավարութեան հրաժարականին ու ճգնաժամը լուծելու ատակ նոր կառավարութեան մը կազմութեան, որովհետեւ Հասսան Տիապի կառավարութիւնը բաւարար ժամանակ ունէր առնուազն յստակ ծրագրեր մշակելու եւ առնելու վերականգնումի առաջին քայլերը, սակայն կատարեց հակառակը՝ աւելի եւս խորացուց ճգնաժամը, զբաղեցաւ դաւադրութեան տեսութիւններ պատկերացնելով, կորսնցուց Լիբանանի բոլոր բարեկամութիւնները ու երկիրը նոյնիսկ մղեց ներքին խռովութիւններու բռնկումի եզրին:

«Պատկերը յստակացաւ վերջերս Պապուսայի նախագահական պալատին մէջ, ուր երկխօսութեան խորագրին տակ տեղի ունեցած ժողովի ընթացքն ու արդիւնքները բացակայութիւններ վառ ապացոյց էին, որ կատարուածը երկխօսութիւն չէր, այլ՝ մենախօսութիւն, որ չյանգեցաւ որեւէ կառուցողական արդիւնքի», ըսած է ՄԴՅԿ Վարիչ Մարմինի ատենապետը:

Ընկ. Գալիփաբեանի համաձայն, պէտք է կազմուի իրապէս չէզոք եւ գործունեայ կառավարութիւն մը, ոչ թէ այսօրուան նման դուրսէն տնօրինող «խորհրդականներու նախարարաց խորհուրդ» մը, որ պէսզի մէկ կողմէ փորձէ լուծել ելեւմտատնտեսական տագնապը, միւս կողմէ կազմակերպէ խորհրդարանական արտակարգ ընտրութիւն՝ հիմնուելով ընտրական արդար ու արդիական նոր օրէնքի մը վրայ, որպէս միակ միջոց փոխելու իշխող փտած վերնախաւը:

ՄԴՅԿ Վարիչ Մարմինի ատենապետին համաձայն, այս փուլին կառավարութեան հրաժարականը եւ գործունեայ կառավարութեան մը կազմութիւնը կրնայ բանալ փրկութեան վերջին պատուհանը, որպէսզի կորուստի չմատնուի քաղաքացիական պատերազմէն ետք նահատակ վարչապետ Ռաֆիք Հարիրիի գլխաւորութեամբ իրագործուած յաջողութիւններու մնացորդացը եւ Լիբանանը չդատարկուի իր աշխատասէր եւ տաղանդաւոր մարդուժէն, այլ վերահաստատէ իր արտաքին կապերը ու վերատիրանայ իր երբեմնի փայլքին:

«ԱՐԱՐԱՏ»

### Արաբական Աշխարհ Տագնապալի Օրեր Լիբանանի Մէջ

Լիբանան ներկայիս կը գտնուի տնտեսական փլուզման եզրին, որ հետեւանքն է տարիներէ ի վեր երկրի ղեկավարութեան շահամոլութեան եւ փտածութեան քաղաքականութեան: Լիբանանեան լիբան մեծ անկում մը արձանագրելով տոլարի արժէքը հասած է 7000 ոսկիի: Դրամատուները գրեթէ դատարկ են: Սոսկալի կերպով գինեւորուած մը բոլոր կենսական ուտելիքներու վրայ: Օրինակի համար միւսը շատերու համար անմատչելի է: Լիբանանեան բանակի զինուորներու ճաշացուցակին վրայէն միս ուտելը ջնջուած է: Տուներէն ներս սառնարանները գրեթէ դատարկ են...: Անթութեան պատճառով օրական միջին հաշուով մէկ հոգի անձնասպան կ'ըլլայ: Երկիրը սովահար դառնալու վրայ է:

### Լիպիա Պառակտուած Երկու Պետութիւն Մէջ Երկրի Մէջ

Լիպիոյ նախկին մենատէր Մուամմար Քադաֆիի տապալումը 2014ին, հետեւանքն էր 2011ին սկսած քաղաքացիական պատերազմին: Ներկայիս այդ երկիրը կ'ապրի պառակտեալ եւ գրեթէ անիշխանական վիճակի մէջ, ուր գոյութիւն ունին զոյգ հակոտնեայ կառավարութիւններ: Իւրաքանչիւր կողմ կը յաւակնի ըսելու թէ ինքն է օրինական իշխանութիւնը:

Միջազգային գետնի վրայ ոչ բաւարար ճանաչում ստացած անջատեալ կառավարութեան կեդրոնն է Լիպիոյ Թրիփոլի քաղաքը: Ան կը հովանաւորուի լիպիական բանակի զինեալ ոյժերու ղեկավարներէն մարաշախա խալիֆա Հաֆթարի կողմէ: Իսկ հակառակորդ կողմն ալ ունի միջազգային մասնակի ճանաչում եւ կը ղեկավարուի Ապտուլլահ Ալ Թահանի կողմէ ու կը վայելէ երկրի խորհրդարանի աջակցութիւնը, նստավայր ունենալով Թապրուք քաղաքը:

Ներկայիս 100-250,000 թուրքեր կ'ապրին Լիպիոյ մէջ: Էրտողանի կառավարութիւնը, մենատիրական ախորժակներ ունի շարունակելու սուլթան Ապտուլ Համիտի կայսերապաշտական ծրագրերը Միջին Արեւելքի մէջ: Ան իր գերակայութիւնն ամրացնելու նպատակով, ռազմանաւեր ղրկած է լիպիական ջուրերը, պաշտպանելու խալիֆա Հաֆթարի իշխանութիւնը, որ միաժամանակ կը վայելէ Միացեալ Նահանգներու եւ Եւրոմիութեան անդամ կարգ մը երկիրներու հովանաւորութիւնը:

զուր կը բանակցի միջազգային դրամատան հետ, դրամական անմիջական օգնութեան համար, քանի որ շատ ծանր պայմաններ կը պարտադրուի, թէ քաղաքական եւ թէ տնտեսական հարթակներու վրայ: Ահազանգային այս վիճակին մէջ երկրի կրօնական համայնքներու պետերը, այլ կազմակերպութեանց առնթներ, անմիջական ելքի կոչեր կ'ուղղեն իշխանութիւններուն:

Վառելանիւթի եւ ելեկտրականութեան տագնապը դժուարացուցած է հիւանդանոցներու գործունէութիւնը: Այս բոլորին վրայ պէտք է աւելցնել նաեւ Գորոնա համաճարակի ստեղծած մեծ մղձաւանջը: Հոկտեմբերէն ի վեր բողոքի ցոյցերը կը շարունակուին բովանդակ երկրին մէջ:

նապէս անել կացութեան մատնուած է Թուրքիան, քանի որ Ռուսաստանի համար հաճելի չէ իր ներկայութիւնը Միջերկրականի այդ ափերուն վրայ եւ կրնայ մեծ վնասներ հասցնել Թուրք-ռուսական բարեկամական եւ տնտեսական յարաբերութեանց վրայ: Նշենք նաեւ որ Ռուսաստան ուժանիւթի (նաւթ) մեծ հայթայթիչ մըն է Թուրքիոյ եւ ռուս զբօսաշրջիկներուն համար Թուրքիան կը նկատուի կազդուրման հաճելի վայրերէն մին: Այսուհանդերձ Թուրքիոյ համար շատ հաճելի չէ նաեւ Ռուսաստանի ներկայութիւնը Սուրիոյ մէջ, յատկապէս այս վերջինի ռազմաօդային աջակցութիւնը սուրիական հողերու վրայ՝ օդային տարածքներու պաշտպանութեան առումով: Այս հարցին մէջ՝ առժամաբար կը տիրապետէ փոխադարձ հանդուրժողութիւն եւ միաժամանակ արթուն եւ զգուշաւոր վերապահութիւն մը երկու կողմերու միջեւ:

Քիւրտ-արաբ եւ սուրիական դեմոկրատական ոյժերու բանբերին համաձայն (SDF) Թուրք կառավարութիւնը պաշտօնապէս կ'աջակցի Տահէշին (ISIS), Մանպիթի Ռազմական Խորհուրդի դիրքերը ռմբակոծելու համար: Նշենք նաեւ որ Սաժուր գիտի ափին կը գտնուին քիւրտերու տիրապետութեան ներքեւ եղող պաշտպանական դիրքերը:

Միջազգային քաղաքական շրջանակները մեծ մտահոգութեամբ կը հետեւին օսմանեան կայսրութիւնը յիշեցնող Թուրքիոյ ծաւալապաշտական ծրագրերուն, որոնց թիրախը հանդիսացած են Սուրիան, Իրաքը, Իրանը, Լիբանանը, Կիպրոսն ու Լիպիան, այլ խօսքով բովանդակ Մերձավոր եւ Միջին Արեւելքը:

Թուրքիա խորամանկօրէն կ'օգտագործէ Արաբական Լիկայի անդամ երկիրներու միջեւ տիրող անհամբերաշի ու անմիաբան գործընթացը, մէկդի ձգելով իր երկիրը յուզող կենսական հարցերը, վերադառնալու համար Բան-Թուրանիզմի օսմանեան կայսրութեան ծաւալապաշտական ծրագրերուն:

# «Համաճարակի Այս Օրերուն Ամբողջ Հայութիւնը Պետք է Համախմբուի Հայաստանի Իշխանութիւններուն Շուրջ»

Շարունակուած էջ 1-էն

տեղեկատուութեան հոսքը, որ տարբեր միջոցներով Հայաստան հասնելով աւելի ապակողմնորոշեց ժողովուրդը, ապա արդիւնքը եղաւ այն, որ շատեր բոլորովին անտեսեցին կամ ձեւականօրէն գործարեցին կանխարգելիչ միջոցառումները, անհիմաստ դարձնելով արտակարգ դրութիւնը, որովհետեւ հազիւ թէ սահմանափակումները վերացուեցան, հիւանդութիւնը հրդեհի պէս կրկին տարածուելու սկսաւ: Ստեղծուած իրավիճակը իսկապէս մտահոգիչ է, քանի որ նման պայմաններու տակ համաճարակին դէմ պայքարի ամենակատարեալ ծրագիրն անգամ պիտի ձախողէր եւ հիմա կառավարութիւնը ստիպուած պիտի ըլլայ կրկին սահմանափակումներ մտցնելու համաճարակին դէմը առնելու համար: Յուսանք, իշխանութիւնները ճիշտ հետեւութիւններ կ'ընեն նախորդ անհաջող փորձէն, իսկ մեր հայրենակիցները իսկապէս լրջութեամբ կը մօտենան այս հարցին եւ հետեւելով պատկան մարմիններու ցուցմունքներուն կը նպաստեն, որ հիւանդութիւնը որ առաջ կարելի ըլլայ վերահսկողութեան տակ առնել:

- Ինչպէս կը մեկնաբանէք Հայաստանի մէջ ստեղծուած քաղաքական իրավիճակը մասնաւորապէս «Քովիտ-19» համաճարակի լոյսին տակ:

- Քաղաքական առումով, կը տեսնենք թէ ինչպէս նախկին իշխանութեան ներկայացուցիչները այս երկու տարուան ընթացքին զանազան միջոցներով, մանաւանդ զանգուածային լրատուական միջոցներով, կը շարունակեն ամէն կերպ վատաբանել ու նսեմացնել իշխանութիւնները, եւ ապատեղեկատուութիւն տարածելով կը փորձեն ստեղծել այն պատկերը, որ Հայաստանի մէջ անիշխանութիւն է եւ վիճակը միայն կը վատանայ: Անշուշտ, համաճարակը եկաւ նպաստելու, որ այդ աղմուկը աւելի ուժգին դառնայ: Այսօր, այն պատեհապաշտութիւնը, որ կը ցուցաբերուի ընդդիմադիր ուժերուն եւ մանաւանդ նախկին վարկաբեկուած իշխանութիւններուն կողմէ ընդունելի չէ: Երբ երկիրը կը գտնուի պաշարման տակ, տեւական լուռ պատերազմի մէջ է թշնամիին դէմ եւ տնտեսապէս շատ լուրջ դժուարութիւններու առջեւ է, նման պարագաներուն տրամաբանութիւնը կ'ենթադրէ, որ իշխանութեան շուրջ տեղի կ'ունենայ համախմբում, մանաւանդ համաճարակին հետ կապուած հարցերուն առումով: Քաղաքականապէս միշտ ալ պիտի ըլլան տարակարծութիւններ ընդդիմադիր եւ իշխանական թեւերու միջեւ, ինչպէս ընդունուած է որեւէ ժողովրդավարական երկրի մէջ, սակայն երբ կայ երկրին սպառնացող արտաքին կամ ներքին վտանգ, իսկ համաճարակը հաստատապէս նման վտանգ է, ապա օրուայ միակ հրամայականը ընդդիմադիր եւ իշխանութիւն համախմբումն է ու միասնական ուժերով այս հիւանդութեան դէմ պայքարը: Եթէ կարելի ըլլայ իրականացնել այդ մէկը, այսինքն երբ բոլորին խօսքը մէկ կ'ըլլայ, երբ մարդիկ պարտաճանաչ կերպով կը հետեւին կանխարգելիչ կանոններուն, երբ դիմակ կրել չկրելը կը

դադրի խնդրոյ առարկայ դառնալէ, ապա միայն այն ատեն պայքարը արդիւնաւէտ կ'ըլլայ: Բացի այդ, այսօրուայ իրավիճակէն քաղաքականապէս օգտուելը, ոեւէ մէկուն համար նպաստաւոր չէ, նոյնիսկ անոնց համար, որոնք կը փորձեն հիմա օգտուել, որովհետեւ եթէ կառավարութիւնը ձախողեցաւ իր առաքելութեան մէջ, եթէ չկարողացաւ վերահսկողութիւն հաստատել հիւանդութեան վրայ, մնացեալ ամեն ինչ երկրորդական է եւ այն վնասը որ կրնայ երկրին հասնիլ անդառնալի կ'ըլլայ:

## Պատեհապաշտութիւնը, որ կը ցուցաբերուի ընդդիմադիր ուժերուն եւ մանաւանդ նախկին վարկաբեկուած իշխանութիւններուն կողմէ ընդունելի չէ

- Դուք որպէս կուսակցութիւն, խօսքը Սոցիալ Դիմոկրատ Հնչակեան կուսակցութեան մասին է, հանդէս եկաք յատուկ այստարարութեամբ, որուն միջոցով կը յորդորէք բոլոր կողմեր բոլորով իշխանութիւններուն շուրջ: Կը մանրամասնէի՞ք հարցը:

- Այո, վերոնշեալ մտահոգութիւններէն ելլելով՝ Հնչակեան կուսակցութիւնը հրապարակեց իր կոչը, «Կոչ համախմբման եւ ոչ թէ տրոհման» վերտառութեամբ, որովհետեւ մենք իսկապէս մտահոգուած ենք Հայաստանի մէջ տեղի ունեցող զարգացումներով եւ մանաւանդ իշխանութեան հակադրուած կողմերու կոչերով ու քայլերով, որոնք կը միտին քաղաքացիին մօտ առաջացնել յուսահատութիւն եւ յուսախափութիւն ներկայ իշխանութեան նկատմամբ, այն յոյսով, որ այդ ամենը պիտի բերէ այս կառավարութեան տապալման, եւ իրենք պիտի գան կամ վերադառնան իշխանութեան: Մենք կը հաւատանք, որ կարճամիտ է նման մօտեցումը եւ վնասաբեր մեր հայրենիքին համար, որովհետեւ այսօր ով ալ ըլլայ իշխանութեան գլխուն, այս նոյն խնդիրներուն առաջ պիտի կանգնի, եւ այս խնդիրները պիտի չլուծուին ո՛չ հիմա ո՛չ ալ յետոյ, եթէ համազգային մօտեցում չըլլայ: Անշուշտ սա չի նշանակէր, որ պիտի չի մատնանշուին սխալները կամ վրիպումները եւ իշխանութեան իւրաքանչիւր որոշում պիտի համարուի անթերի կամ կատարեալ: Վերջ ի վերջոյ, հասկանալի է, որ ընդդիմութեան դերն ու պարտականութիւնն է ըլլալ հակալիռ օրուայ իշխանութեան, քննադատել բացթողումները եւ ընդգծել անոր բոլոր բացասական կողմերը: Սակայն երբ հարցը կը վերաբերի համաճարակին, համագործակցութեան այլընտրանք չի կայ, քանի որ համաճարակի կասեցումը առաջին նախապայմանն երկրի մէջ առկայ տնտեսական ճգնաժամի եւ այլ հարցերու հանգուցալծման:

- Վերջին շրջանին, ինչպէս ամբողջ աշխարհը այնպէս ալ Միացեալ Նահանգները տագնապալի օրեր ապրեցան «Քորոնա» վարակին հետեւանքով. Ինչպէ՞ս կը գնահատէք ընդհանուր իրավիճակը եւ արդեօք ԱՄՆ յաջողեցա՞ւ «Քորոնա»-ի դէմ իր պայքարին մէջ:

- Ինչ կը վերաբերի Ամերիկայի Միացեալ Նահանգներուն եւ «Քորոնա»-ի պայքարին, դժբախ-

տաբար հակառակ աշխարհի ամենահոգեւոր եւ ամենահարուստ երկիրը ըլլալուն, այսօր «Քորոնա»-ի դէմ պայքարը ոչինչով կը տարբերի Հայաստանի կացութենէն: Աւելին, վերջին շաբաթներուն, այն նահանգներուն մէջ, որոնք շատ փոքր թիւով դէպքեր ունէին, այսօր թիւերը օրական մագլցում կ'ապրին: Ասոր մէջ պատասխանատուութեան մեծ բաժին ունի նաեւ Ամերիկայի Դաշնակցային կառավարութիւնը, այսինքն Թրամֆի վարչակարգը, որովհետեւ ամիսներ առաջ, երբ պարզուեցաւ, որ Չինաստանի՝

Ուուհան քաղաքին մէջ այս համաճարակը իսկապէս աւերներ կը գործէր, Ամերիկեան կառավարութիւնը եւ առողջապահական համակարգը՝ դեռ Յունուարէն տիրապետելով հանդերձ այդ տեղեկութեան, նախապատրաստական ոչ մէկ քայլ ձեռնարկեց: Դժբախտաբար, Ամերիկայի մէջ քաղաքական միջոցները այնքան անառողջ է, որ այս հարցը մինչեւ օրս կը դիտուի քաղաքական տեսանկյունէ, եւ ոչ թէ որպէս համազգային կամ համաշխարհային ճգնաժամ: Նկատի ունենալով նաեւ, որ չառաջիկայ Նոյեմբերին նախագահական ընտրութիւններն են, Նախագահ Թրամֆի այս հարցին առաջին իսկ օրէն քաղաքական մօտեցում ցուցաբերեց եւ զգալով այս հարցի հաւանակ վտանգը իր վերընտրութեան հետ կապուած, ան ամէն կերպ փորձեց այն պատրանք ստեղծել, որ սա վտանգաւոր հիւանդութիւն չէ եւ օր մը հրաշքի պէս պիտի վերանայ կամ երբ օդերը տաքնան պիտի չքանայ: Դժբախտաբար ճիշտ հակառակը տեղի ունեցաւ եւ ինչպէս տեսանք որոշ նահանգներու մէջ, մանաւանդ Նիւ Եորքի եւ մեր Քալիֆորնիոյ նահանգին մէջ հակայական թիւով մարդիկ հիւանդացան ու մահացան: Այսօր, եթէ որոշ նահանգներու մէջ դրութիւնը աւելի վերահսկելի կը դառնայ, ապա իրավիճակը տրամազծօրէն տարբեր է հարաւային նահանգներուն մէջ, մասնաւորապէս Փլորիտա եւ Թեքսաս, ուր սկզբնական շրջանին հիւանդներուն թիւը սակաւ էր, սակայն հազիւ սահմանափակումները վերացուեցան, վարակակիրներուն թիւերը կտրուկ բարձրացան, ստիպելով այդ նահանգներու իշխանութիւններուն կասեցնել վերաբացումը: Մենք վերը խօսեցանք Հայաստանի մէջ համախմբման անհրաժեշտութեան մասին, իսկ հոս ալ ուրիշ երեւուցիւ մը ականատես եղանք, երբ նահանգները միահամուռ կերպով կը դիմէին ու կը յորդորէին Թրամֆի վարչակարգին, որպէսզի համաճարակի դէմ պայքարի մէկ միասնական ծրագիր մը մշակուի, սակայն դժբախտաբար այդ տեղի չունեցաւ: Ընդհակառակը, եղան իրավիճակներ, երբ նահանգները պարտաւորուած եղան իրարու դէմ մրցիլ տպահովելու համար անհրաժեշտ բժշկական պիտուքները՝ դիմակներ, արհեստական շնչառական գործիքներ, եւ այլն, երբեմն շու-

Գրեթէ նոյնն է մեր երկրի պարագան: Երբեք քաղաքացուցիչ չեմ գտներ «Ես հաւատացած չեմ», «ոչինչ էլ չկայ», «սաղ շինծու բան ա...», «ես ազատ եմ, կ'ուզեմ կը դնեմ, չեմ ուզի, չեմ դնի» եւ նման եսակեղրոն արտայայտութիւնները: Ասիկա կը նմանի այն պարագային, երբ թշնամիին ու մեակոծիչ օդանաւերը վերէն ուռմբեր կը տեղացնեն քաղաքին վրայ եւ սակայն մարդիկ կը գտնուին եւ կ'ըսեն. «Աստուած մեծ է, Ան կը խնայէ իր գաւակները...»:

Հայաստանցի իւրաքանչիւր քաղաքացի ՊԱՐՏԱԻՈՐ է ենթարկուել ամբողջ Հայաստանին վերաբերող վարակի կանխարգելման նպատակով տրուած հրահանգները:

Այլապէս չենթարկուիլը կը դառնայ անհնազանդութիւն, անիմաստ յամառութիւն, անձնական քմահաճոյք:

Վերջերս նախանձա շարժեցաւ եւ վիրաւորուած զգացի, երբ կարդացի թէ Եւրոպական Միութիւն մտնելու արտօնութիւն չէ տրուած Հայաստանին, որովհետեւ մենք չենք համապատասխաներ առողջապահական ցուցանիշներուն, այլ խօսքով՝ չենք որակաւորուիր, մինչ մեր դրացի Վրաստանին կը տրուի արտօնութիւն: Ասիկա մեծ ամօթ մը կը նկատեմ ես՝ Երուսաղէմի մէջ քիչ թէ շատ հասարակական երկարամեայ գործունէութիւն ծաւալած անձա:

Հետեւաբար, ա.- քանի որ մեր երկրին մէջ կը տիրէ թաքուն թշնամին՝ պսակաձեւ ժահրը, առաւել եւս երբ մեզի կը սպառնան ներքին բախումները, արեւելքէն, արեւմուտքէն եւ հիւսիսէն տեղացող սկսնալու գործողութիւններ, իրաւունք չունինք ազատ թողուլ որ անոնք կատարեն իրենց կործանիչ դերը:

բ.- Երկրին մէջ անմիջապէս հռչակուի արտակարգ վիճակ:

գ.- Վարչապետ Փաշինեանը նոր «խեղափոխութիւն» մը պէտք է ընէ եւ անցնի կտրուկ միջոցներու: Այս թշնամիներու դէմ պայքարը մեղմ չի կրնար ըլլալ, մանաւանդ տականքներու դէմ, որոնց պէտք է չէզոքացնել քաղաքականապէս, օրէնք դուրս յայտարարէ հակա-յեղափոխական կուսակցութիւնները եւ բոլոր կեղծ (ֆէյք) լուրեր տարածողները՝ տալով իրենց արժանի պատիժը:

## Յուսադրիչ Թարգմանութիւններ

«Ինչ որ տուի ուրիշին, վերադարձաւ անուշցած»: (Վ.Թէքեան)

ԴՈՎՏ. ՄԻՆԱՍ ԳՈՏԱՅԵԱՆ

Երկարամեայ ուսուցիչի մը կեանքը լի է հպարտառիթ անակնկալներով, որոնք եթէ ինչ որ չափով արդիւնքն են ուսուցիչին տուած դաստիարակութեան եւ ուսման, կը դառնան քաղցրահամ եւ վահան թէ քեանի խօսքերով՝

- Ինչ որ տուի ուրիշին, վերադարձաւ անուշցած:

Էլնամակ մը եւ ապա հեռախօսազանգ մը գիւս կը տանէր 15 տարի ետ, երբ այդ տարի ՀԲԸՄ Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի (ԱՄՆ, Քալիֆորնիա) ԺԱ. դասարանի աշակերտները գլուխս հաւաքած կը տանէի տասնօրեայ հայրենի շրջագայութիւն-ուխտագնացութեան: Ակնոցներուն ետին բացառապատրաստ հետաքրքիր աշակերտ մը՝ Պիոն անունով, միշտ հարցումներ կը հարցնէր: Միտով եւ երբեմն ալ համբերութեամբ կը պատասխանէի: Ան աւարտեց յաջորդ տարի եւ այլեւս անունը չլսեցի, բացի այն պահէն, երբ կը հանդիպէի իր պատուական մեծօր եւ մեծօր՝ Տէր եւ Տիկ. Նուպար եւ Մարօ Յակոբեաններուն: Եւ այսպէս օր մըն ալ կ'իմանայի թէ ուսման համար նախընտրել է երթալ Աւստրալիա եւ հետեւիլ հոգեբանութեան... Ուրախ լուր մը՝ ի հարկէ:

Հեռաձայնողը Պիոն Միլոյեանն էր: Շուտով կը պարզուէր, որ ան գբաղեր է եւ մտադրեր է նուիրուիլ հայ գրականութիւնը անգլերէնի թարգմանելու գործին...: Ասկէ աւելի ուրախ լուր մը կրնա՞ր իմանալ ուսուցիչ մը, այս պարագային ես եւ կրնա:

Հպարտութեամբ կը խօսէր թէ ինք եւ իր համալսարանական ընկերուհին՝ Օրդ. Քիմպլը Մըք-


ֆարլէնը անգլերէնի թարգմանած են Րաֆիի «Ջալալեդդին»ը, «Հարեմ»ը, «Մի օրավար հող»ը եւ աշխուժօրէն ու հաւատով լծուած են երկուքով միասին հարստացնել անգլերէն ընթերցող հասարակութեան գրադարանը:

Միտս կը նեղուէր,- կը գրէր ինծի Պիոն,- որ նոր սերունդի հայերն ու օտարները գրեթէ ոչինչ գիտեն հայ գրականութեան մասին եւ հրապարակի վրայ գտնուողներէն ալ լուր չունին, մինչդեռ հայ գրականութիւնը հրամցնելիք շատ երկեր ունի անգլերէն ընթերցողներուն ու համաշխարհային գրականութեան:

Ճիշդ էր Պիոն. այս պակասը իր մաշկին վրայ զգացեր էր հեռաւոր Աւստրալիայի իր յաճախած համալսարանին մէջ, ուր կը հանդիպի ծանրակշիռ աստղաբանութիւն ուսուցողի մը, որ իր նման կը սիրէր կարգալ եւ աշխարհը ճանչնալ գրականութեան ընդմէջէն: Ճաշակները բռներ էին: Շատ չանցած միասնական ջանքերով կը հիմնէն SOPHENE հրատարակչական հաստատութիւնը եւ իրար ետեւէ լոյս կ'ընծայեն հայութեան մասին տարբեր ժամանակներուն գրուած անգլերէն գիրքեր եւ թարգմանութիւններ:

Պիոնն ու Քիմպլը ինչ այնքան կը խորանան ու կը խանդավառուին որ վերջինս կ'որոշէ Չուրը աղբիւրէն խմել եւ կը սկսի հետեւիլ ՀԲԸՄ-ի Հայերէն տեսալսողական առցանց դասընթացներուն (AGBU AVC)՝ հիմնուած համակարգիչի աշխարհին մէջ մասնագիտացած Երուսաղէմի Ջօրեանի ջանքերով:

Աչքէ կ'անցընեմ տրամադրութեան տակ գտնուող իրենց թարգմանութեամբ կատարուած Րաֆիի



«Հարեմ»ը եւ «Ջալալեդդին»ը, «Խնթը», եւ «Պարոյր Հայկազն»ը, ապա նոր խմբագրութեամբ 1831-ին հրատարակուած Չարլզ Նիւմանի (Charles Neumann) թարգմանութեան վերահրատարակութիւնը, վահան Րաֆիի «Պատմութիւն Ռուբենեանց»ը ("History of the Rubenian Dynasty"), Ստրաբոնի (Ն.Ք. 64-24 Ք.Ե.) բազմահատոր "Geographica"-ի Միջին Արեւելքի նուիրուած գիրքը, որ կարեւոր աղբիւր մըն է Հայաստանի եւ Միջին Արեւելքի ժողովուրդներու պատմութեան համար ("The Near East"):

Մենք կը նախընտրենք որ հայերը եւ անոնք, որոնք գիտեն հայերէն խօսիլ եւ կարգալ, թարգմանութեան կողքին ունենան նաեւ հայերէն բնագիրը: Ուրեմն թարգմանութիւններուն դիմաց բնագիրն ալ կը տպենք: Դժբախտաբար սփիւռքահայերուն եւ մանաւանդ նոր սերունդին մեծամասնութիւնը մեր հարուստ հայ գրականութեան մասին չի գիտեր, բացի այդ, հետաքրքրուած չէ: Այս թարգմանութիւնները կատարելով, կը յուսանք մեր գրականութիւնը ներկայացնել ոչ միայն հայերէն չգիտցող հայերուն, այլեւ օտարներուն, որոնք

թիւով աւելի շատ են:

Հայ գրականութիւնը օտար լեզուներով թարգմանելը հայ մշակույթի ծանօթացման ուղղութեամբ տարուած կարեւոր ծրագիր մըն է: Պահ մը երեւակայենք որ Ե. Դարուն Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթեւն ու իրենց սաները թարգմանած չըլլային յունա-հռոմէական եւ ասորերէն լեզուներով գրուած գլուխգործոցները՝ սկսելով Աւետարանէն: Գրականութիւնը, որպէս ժողովուրդներու եւ քաղաքակրթութիւններու միջեւ հաղորդակցութեան կարեւոր միջոց, զգալի աւանդ կը բերեն ազգերու միջեւ փոխհասկացողութեան, բարեկամութեան եւ համատեղ գոյակցութեան:

Այս գիտակցութեամբ եւ հաւատով Պիոն Միլոյեան կը գրէ ինծի.

- Հարիւրաւոր տարիներէ իվեր ուրիշ ազգերու գրականութիւնը կը գովեն (ուսական, ֆրանսական, հնդկական, նիկերիական եւ այլն...), որովհետեւ կը հաւանին եւ սրտի մօտ կ'ընդունին: Հայ գրականութիւնը նոյնպէս օր մը պէտք է հասնի ցանկալի բարձունքին: Ուրիշ ո՞վ, եթէ ոչ մենք՝ հայերս պէտք է յաջողինք լոյսին բերել մեր վէպերն ու պատմութիւնները:

# Կ՛ուզեմ Դուրս Ելլել

ԴՊՎՏ. ԳՐԱՅՐ ԵՐԵՎԱՆ

«Հրա՛յր, ես կրնամ մագերդ կտրել»:

Ճիշդ է, որ կեանքս նուիրած եմ տիկնոջս՝ Արտալին եւ ընտանիքիս, բայց՝ ոչ մագերս:

«Իսկ եթէ՞ ծուռիկ-մուռիկ կտրես: Եկուր հրաժարիր այս քաղաքործութենէն», եղաւ վերջնական որոշումս՝ Արտալին այս մտայնացումին:

Քուէյթ՝ Կ՛ապրիմ Մահպուլա շրջանին մէջ, որ մարտէն ի վեր շրջափակումի մէջ է համավարակիւն պատճառով: Քուէյթ նախաձեռնեց շատ խիստ միջոցառումներու՝ «Քորոնա»-ի դէմ իր պայքարին մէջ, նոյնիսկ ամբողջութեամբ առանձնացնելով որոշ թաղամասեր: Չեմ գիտեր՝ բա՛խտ է, թէ՞ այլ բան, բայց ես ալ կը գտնուիմ այդ ընտրուածներուն մէջ եւ կ՛ապրիմ շրջափակումի ենթարկուած թաղամասին մէջ՝ մինչեւ այսօր:

Պատուհանէն կը դիտեմ ծովը, բայց առանց կարենալ հասնելու անոր: Եւ արդէն եղաւ աւելի քան չորս ամիս, որ տունէն դուրս չեմ ելած: Եւ եթէ ելլեմ՝ հագուագիւտ, արեւուն ջերմութիւնը վայելելու:

Կրնամ տեսնել, թէ մագերս երկարած են եւ սափրիչի պէտք ունին: Բայց այդ մէկը հիմա այս շրջափակումին մէջ առաջնահերթութիւն չէ: Կը մտածեմ ազատութեան մասին, եւ թէ ինչքան գեղեցիկ է եղեր: Մարդիկ պատմութեան ընթացքին եւ մինչեւ հիմա պայքարած են ազատութեան համար: Բայց թէ ինչպէ՛ս գործածած են այդ ձեռք բերուած ազատութիւնը, տարբեր հարց:

Բայց կայ աւելին: Նոյնքան դժուար է եղեր մարդուն ներաշխարհին մէջ հաւասարակշռութիւնը պահել այս դժուար օրերուն: Բանտարկուած զգալու եւ չկարենալ դուրս ելլելու իրականութիւնը կրնայ ճնշել վրայ: Եւ ինչքան որ Աստուածաշունչի մարդ եմ եւ կեանքիս հիմքը դրած եմ Աստուծոյ վրայ, բայց կը տեսնեմ, թէ նոյնքան մարդ եմ նաեւ: Եւ բանաստեղծին հետ կը կրկնեմ՝ «Նողանիւթ շինուածք» ունիմ: Բայց միշտ ալ լիշէլու եմ, որ Աստուած է կեանք տուողը:

Հիմա կայ կեանքի ու ապրելակերպի նոր մշակույթ մը: Ընդունիւ կամ ոչ՝ շրջափակումի մէջ կեանքը շատ մեծ համեմատութեամբ կը շարունակուի առցանց: «Ընկերային հեռակապակցութիւնը» այսօր մեր կեանքն է, եւ շրջափակումի մէջէն կը փորձեմ տեսնել, թէ ինչքանով կրնայ այս նոր կենցաղը իմ ալ ըլլալ:

Լիբանանի լուրերը քաջալերական չեն: Քուէյթ նստած դարձեալ կ՛ապրիմ երկրիս մղձաւանջը: Այս ո՞րքան տագնապ պիտի ապրի մեր փոքր երկիրը: Տնտեսական այս վերջին փլուզումը չապրեցանք այս ուժգնութեամբ՝ նոյնիսկ քաղաքացիական ամբողջ պատերազմի օրերուն: Իսկ հիմա՞: Այսքան ահաւոր ցնցո՞ւմ: Ե՞րբ պիտի գայ այդ օրը, որ ղեկավարութիւնը զգաստանայ, իսկ կողմերը գիրար հասկնան:

Նշան Տէր Թարութիւնեանի յայտագիրին տակ ծնունդ առած զարգացումները մէկ կողմէ մտահոգիչ են, բայց միւս կողմէ՝ կը բարկացնեն: Մեր պատանեկան եւ երիտասարդական տարիներուն միշտ ալ մաքառեցանք հայ-լիբանանացի այս երկու ինքնութիւններու միացումին եւ անոնց միջեւ



կապ մը գտնելու գրաւականին համար:

Այլեւս չեմ ուզեր խօսիլ այս ինքնութեան փնտրտուքին մասին:

Ինձի եւ երեւի բոլորիս յատակ է: Եթէ հպարտ հայ եմ-ենք, բայց նոյնքան նուիրուած Լիբանանի, որ ինձի-մեզի տուաւ հպատակութիւն եւ ինքնութիւն:

Ո՛չ գաղթականի մեր պատմութիւնը, ոչ ալ մեր հայկականութիւնը կրնայ մեզ հեռացնել մեր լիբանանցիութենէն: Իսկ Յեղասպանութիւնը սակարկելի չէ: Յեղասպանութիւնը սրբութիւն է՝ հայուն եւ ամբողջ մարդկութեան համար: Բայց ինչ խօսք, որ Նշանին դէմ արշաւը երեւի կը հետապնդէ քաղաքական այլ նպատակներ:

Հայաստանի ներքաղաքական վիճակը դարձեալ խնդրալարոյց է, իսկ ասոր վրայ կու գայ աւելնալու համավարակիւն ստեղծած առողջապահական բարդ կացութիւնը: Վարակուածներուն թիւը երբեք չի նուազիր, ինչպէս որ չեն նուազիր պետութիւն եւ ընդհանրապէս ուժերուն միջեւ տարակարծութիւնները:

Բայց այդ ե՞րբ է, որ պիտի զգաստանանք, թէ հայրենիք մը ունինք Հայաստանով եւ Արցախով, եւ թէ անհրաժեշտ է ի գին ամէն զոհողութեան պահել եւ պահպանել զանոնք:

Պիտի պահենք հայրենիքը, գոր ուզեցինք տեսնել անկախ, եւ պիտի պահպանենք զայն մեզ շրջապատած բոլոր երեւելի եւ աներեւոյթ փորձանքներէ: Այս պարտինք իրականացնել բոլորս միասին՝ պետականութիւն, ընդհանրապէս եւ սփիւռք:

Այս իմաստով կարիք կայ ուժերու մէկտեղումի, նոյնիսկ երբ միտքերը տարբեր ալիքներու վրայ ըլլան: Պատմութեան փորձառութենէն պիտի սորվինք, սորվեցնենք եւ ապրինք՝ սրբազրելով եւ աշալրջութեամբ, հայրենիքի եւ հայ ժողովուրդի բարօրութեան համար:

«Ազդակ» օրաթերթի կազմակերպած առցանցի լսարանները կը համախմբեն հայկական տարբեր գաղութներէ հայեր՝ վեր առնելով համահայկական եւ հայրենի հրատապ հարցեր: Դոկտ. Հրաչ Չիլինկիրեանի գեկոյցը՝ «Սփիւռքահայ հանրային կարծիքը 21-րդ դարուն» խորագիրով, եկաւ մեզ բոլորս դարձեալ դնելու բազմատեսակ մտահոգութիւններու դէմ յանդիման՝ հայկական եւ յատկապէս սփիւռքահայ, ուր դարձեալ պիտի տեսնէինք, թէ մեր գոյսպայքարի ճամբան դիւրին չէ: Լսա՛ «հայկական սփիւռքի հարցախոյզի» տուեալներուն, սփիւռքի դե-


կավարութեան եւ առաջնորդութեան հարցը մտահոգութիւն կը հանդիսանայ: Ղեկավար միտքը եւ անոր առաջնորդութիւնը, եւ երեւի այդ առաջնորդութեան նկատմամբ արժանահաւատութիւնը կը նուազի: Ու տակաւին կը բազմանան հայկական կառուցներէ եւ գործունէութիւններէ հեռու մնացած եւ մնալու ենթակայ հայկական իրականութիւնները: Եւ վերջապէս Միջին Արեւելքի անորոշ եւ անպահանջ կացութիւնները պատճառ պիտի դառնան, որ հայկական գաղութները աւելիով նօսրանան:

Բայց այս բոլոր մտահոգութիւնները ի՞նչ տարողութեամբ եւ ինչպէ՞ս պիտի արժեւորուին:

Տան մէջ կայանաւորուած կը հետեւիմ նաեւ միջազգային իրավիճակներուն: Անոնց մեծագոյններէն են իրենց գլուխը դարձեալ ցցող ցեղապաշտական կացութիւնները: Թէեւ Ամերիկայէն սկսաւ ատրիկա, բայց համավարակի նման տարածուեցաւ շատ մը երկիրներ: «Սեւամորթներուն կեանքերը կարելոր են» կարգախօսը դարձաւ տեսլական՝ քիչ մը ամէն տեղ: Այսօր պատմութեան մէջ իրենց անունը կերտած անհատականութիւններ անբաղձալի տարրեր կը նկատուին, իսկ անոնց լիշատակին կառուցուած արձանները կը խորտակուին կամ կը վերցուին: Ներկայ օրերու հակամարտութիւնը զարմանալի չէ ինձի համար: Նիւ Եորքի Աստուածաբանական համալսարանին մէջ դոկտորական վկայականի պատրաստութեան տարիներուն դասընկերներս մեծամասնութեամբ սեւամորթներ էին: Հաղորդակցութիւններու մէջէն կը տեսնէի իրենց նեղութիւնը եւ զայրոյթը Ամերիկայի ցեղապաշտական կարգ ու սարքին նկատմամբ:

Քուէյթի շրջափակումով լիճակէս արագ ակնարկ մը նետելով անցնող ամիսներուն տեղի ունեցած այս բոլոր իրադարձութիւններուն վրայ՝ հայկական թէ՛ այլ, սկսայ տեսնել աւելիով, թէ ինչքան անհրաժեշտ է ուրիշը յարգելու եւ զայն հասկնալու:

## Միեր Մկրտչեան Յետ Մահու Դարձալ «Կիւմրիի Պատուաւոր Քաղաքացի»



Ուրիշը, որ ինձմէ եւ քեզմէ տարբեր է՝ լեզուական, ցեղային, մշակութային, քաղաքական, ընկերային եւ տնտեսական մակարդակներու վրայ: Ուրիշը, որ նոյնքան մարդ է: Եւ ուրիշը յարգելով եւ ընդունելով ինչքան անհասկացողութիւններ կրնան նուազիլ:

Ուրիշը հասկնալով կարելի կ'ըլլայ ուժերը մէկտեղել: Եւ ուժերու մէկտեղումը յառաջխաղացք է՝ հաւաքական մեր կեանքերուն համար:

Բայց կայ տակաւին իմ իրավիճակս՝ շրջափակուած եւ տան մէջ կայանաւորուած:

Կ՛ուզեմ դուրս ելլել: Դուրս ելլել ի՞նչ ընելու համար:

Մագերս կտրելու: Վստահաբար շատ աւելին՝ գործ ընելու: Այո՛, շատ գործ կայ ընելիք:

Իսկ գործը՝ հայկական, բայց նաեւ համամարդկային:

Պիտի աշխատինք, որպէսզի հայը, նաեւ աշխարհը յարգէ, ճանչնայ եւ ընդունի ուրիշը:

Ուրիշը, որ տարբեր է, բայց արժանի է ճանչցուելու: Ուրիշը ճանչնալով է, որ կը ճանչնաս տարբեր միտքեր: Երբ ընդունիս տարբեր միտքեր, կը համախմբես կարողականութիւնները: Այս համախմբումը դրականօրէն կը նպաստէ համերաշխ համակարգեր ստեղծելու:

Ուրիշը ճանչնալը գործ կը պահանջէ:

Գործելու համար անհրաժեշտ է որ դուրս ելլեմ: Դուրս ելլենք՝ բոլորս:

Դուրս ելլեմ-ելլենք՝ տունէն եւ անմիջական շրջափակէն: Բայց նաեւ քու-մեր անձերէն եւ ինքնութիւններէն:

Կ՛ուզեմ դուրս ելլել, որպէսզի շարունակեմ մասնակցիլ գործին, որ կը ճանչնայ ուրիշը եւ կը յարգէ զայն: Այս գործընթացն է, որ կը կերտէ: Կը կերտէ կեանքեր: Եթէ հայուն, բայց նաեւ՝ մարդուն: Եւ այս կեանքերը կառուցելու համար պէտք է «դուրս ելլել»:



Մհեր Մկրտչեանի ծննդեան 90-ամեակի առթիւ, Կիւմրիի տրամաթիկական թատրոնի շէնքին դիմաց գտնուող արձանին առջեւ, ծաղիկներ ու ծաղիկեպսակներ խոնարհած են մարզային ու քաղաքային իշխանութեան ներկայացուցիչները:

Արձանի հեղինակը քանդակագործ, ժողովրդական նկարիչ՝ Արա Շիրազն է:

Քարէ ու պղնձէ ձուլուած արձանի կողքին արուեստագէտին ուրախ եւ տխուր դէմքերն են:

Կիւմրիի քաղաքապետարանի աշխատակազմը այցելած է նաեւ

Մհեր Մկրտչեանի յուշատուն-թանգարանը եւ տնօրինութեան յանձնած Մհեր Մկրտչեանին պատուաւոր շքանշանը:

Մհերը՝ Ֆրունզիկ Մկրտչեան, ծնած է 1930 թուականին Լենինական, ապրած է Թեքսթիլ թաղամասը:

Այն փողոցը, ուր անցուցած է անուանի դերասանը իր մանկութեան ու պատանեկութեան տարիները, կը կրէ դերասանի անունը, իսկ շէնքին փակցուած ցուցանակը կը լի շէնքն է, որ 1937-1953 թուականներուն այդ տունին մէջ ապրած է Մհեր Մկրտչեանը:

# Քաղցրիկ Պուրճ-Յամնուտ(5)

## ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆ

Մեր թերթավաճառ Պարգեւը ամիսներ առաջ աւետած էր, որ «Կարմիր բանակը մտաւ Պերլին»,- վերջապէս,- ու մեր հոգիները խաղաղեր էին այդ երկար մղձաւանջէն, երբ օր մըն ալ պայթեցոյց բոլորովին անսպասելի ուսմբ մը.

-Բոլոր հայերը պիտի երթան Հայաստան...

Ճիշդ կը լսէի՞նք...Հայաստան...բոլոր հայերը...մենք ալ...Ես ալ...

Հայոց պատմութենէն գիտէինք, որ գոյութիւն ունեցած է հեքիաթային երկիր մը՝ Հայաստան անուամբ, բայց ան մինչեւ հիմա գոյութիւն ունի՞ր ուրեմն...

«Հայրենիք»-ի ձայնին վաճառքը իսկոյն կրկնապատկուեցաւ, սակայն կայ աւելին. թերթ գնող թէ չգնող անցորդներն ու թաղեցիները շրջապատեցին թերթավաճառը՝ հարցումներու տարափ մը տեղացնելով անոր գլխուն. կ'ուզէին աւելի լուսաբանուիլ, ուստի չէին վարաներ գանազան մանրամասնութիւններ հարցնելու՝ ստոյգ բան մը գիտնալու համար:

-Այո, եղբայր, այո՛, բոլորս պիտի տանին, մէկ հայ պիտի չմնայ դուրսը:

1945-ի վերջերուն...1946-ի սկիզբներուն էր:

\*\*\*

Եւ այնուհետեւ ելեկտրակա-նացաւ հայ կեանքը իր բոլոր բաղադրիչներով եւ այնքանով, որ մենք կը յաջողէինք ըմբռնել. մեզի համար կար երազային ճամբորդութիւն մը, երազային նաւով մը, դէպի երազային երկիր մը, ճիշդ հոն, ուր Սասունցի Դաւիթը իր թուրով երկու կտոր բրու Մարայ Մելիքը, Հայկ Նահապետ սպաննեց Բէլը, ուր շատակեր Շարան կ'ուտէր Շիրակի դաշտին ամբողջ ցորենը, Արշակ երկրորդ ոչնչացուց պարսիկ կէս միլիոննոց բանակը՝ ողջ ձգելով միայն Շապուհը, որ փախաւ-գնաց՝ անամթաբար լքելով իր կանանոցը...

Բայց եւ այնպէս շուտով սկսաւ հեքիաթը շօշափելի իրականութեան վերածելու ծառայող առաջին եռուզեռը. ճիշդ մեր բնակարանին դիմացը կը գտնուէր Պուրճ-Համմուտի քանի մը հագուստներ երկարակամի շինքերէն մէկը, որուն երկրորդ յարկի հիւրանոցը վերածուեցաւ գրասենեակի եւ տրամադրուեցաւ,- ինչպէս կը կոչուէր այն օրերուն,- «Ներգաղթի կոմիտէին»(1):

Ներգաղթի կոմիտէ կոչուածը կը բաղկանար երկու սակաւախօս, շատ խոհուն, յարատեւ ժպտող, ծայրայեղօրէն գոռշուկ կիրթ անձնաւորութիւններէ, որոնք շաբաթը քանի մը անգամ կու գային գրասենեակ՝ բերելով յատուկ տոմարներ, որոնց մէջ կ'արձանագրէին «Հայաստան երթալ ցանկացողներին անունները»՝ առ ի սերտողութիւն:

Կարծես կը հեզնէին մեզ. չցանկացող կա՞ր...

Եւ ահա շրջակայ թաղերու ողջ բնակչութիւնը առտուան լոյսը չբացուած սկսաւ խուժել գրասենեակ՝ առաջինը արձանագրուելու մարմաջէն տարուած բազմութիւններով՝ յառաջացնելով վէճի, վիճաբանութեան, հրմշտուքի ու կռիւի խաղաղեղէտ ու գաւեշտական տեսարաններ: Կոմիտէի ներկայացու-

ցիչները կը գրէին թեկնածուներուն բոլոր տուեալները՝ անուն-մականուն, բնիկ որտեղացի, զբաղում, գաւազներու թիւ ու տարիք եւ այլն: Արձանագրութեան կ'ընկերանար թելադրութիւն մըն ալ, թէ շուտով պիտի հրաւէր ստանան, ուրեմն՝ համբերեն:

Եւ այնուհետեւ կը սկսէր անորոշ սպասումի, անվերջանալի գրոցներու, խառնակ գիշերներու երկար շրջան մը, որ գերծ չէր կասկածէ ու մտահոգութենէ: Մարդիկ պարզապէս չէին հաւատար, որ նման բան մը կ'ընար տեղի ունենալ:

Սակայն ժամանակը եկաւ հաստատելու, որ հեքիաթ չէր այս բոլորը, երբ օր մըն ալ մեր



Թրանսիլվանիա 1946.- Առաջին հայրենադարձները

թաղերուն մէջ երեւցաւ ծանօթ նամակաբաշխը չիշեցնող մարդ մը՝ մախաղը ուսին, ձեռքին դեղին տրցակներ. ան բնակարաններու թիւերուն կը նայէր, անուններ կը հարցնէր, տուններ կը մտնէր եւ կը յանձնէր տուեալ անունը կրող դեղին տոմս մը, որ կը հաստատէր ենթակային ընդունուած ըլլալը եւ կը թելադրէր պատրաստ ըլլալ:

-Բայց տուններնիդ մի՛ ծախէք, սպասեցէ՛ք, պիտի բերեմ կարմիր թուղթ մըն ալ, այն ատեն պիտի ծախէք տուններնիդ եւ նաւահանգիստ երթաք,- բերանացի ու բարեխղճօրէն կը յանձնարարէր ցրուիչը՝ լաւ սորված դասի մը պէս:

Այս բոլորը արդէն կը վանէին յետին կասկածներն ալ:

Տոմս ստացողները կը դառնային հետաքրքրութեան իւրաքանչիւր առաւելագ. հեռու-մօտիկ կու գային «Իրենց աչքերով տեսնելու», շօշափելու, հոտոտելու ու կարդալու այդ տոմսերը եւ իրենց կարգին համոզուելու:

Այնուհետեւ սկսաւ ուրիշ եռուզեռ մը ու տագնապ մը. ի՞նչ ընել, որո՞ւ ծախել տունը, ինչպէ՞ս յաճախորդ գտնել, երբ ամբողջ Պուրճ-Համմուտը վերածուած էր անմիջական ու հաւանական տնավաճառներու հաւաքականութեան մը:

Եւ չես գիտեր ուրկէ եւ ինչպէս, ահա մեր թաղերուն մէջ սկսան երեւիլ տեղացի արաբ հայրենակիցներ, որոնք հետ սակարկութիւններ տեղի կ'ունենային եւ համաձայնութիւններ կը գոյանային: Ընդհանրապէս տանտէր ու յաճախորդ կը համաձայնէին գինի մը շուրջ, մինչեւ անգամ կը վճարուէր պզտիկ կանխավճար մը՝ սպասելով բո՛ւն վաճառքին, որ պիտի կնքուէր ի մօտոյ: Եւ մարդիկ իրենց տարիներու վաստակով ու

քրտինքով ձեռք ձգած տնակը,- որ ընդհանրապէս միասնեակ բոցն մըն էր՝ խոհանոցով մը ու բաղնիքով մը եւ քանի մը թիզ ազատ տարածքով, ուր գրեթէ ամէն ոք քանի մը որթատունկ, սալորենի, թզենի կամ նունենի տնկած էր՝ ի յիշատակ Արեւմտեան Հայաստան ձգուած փարթամ այգիներու ու մրգաստաններու,- կը յօժարէին ծախել քանի մը հարիւր լիբանանեան ոսկիի, օրուան սակերով՝ երկու, երեք կամ լաւագոյն պարագային չորս-հինգ հարիւր դոլարի՝ վախնալով որ վերջին պահուն յանկարծ «այդքան տուող ալ չգտնէին»:

Կար աւելին. եղան այնպիսիներ, որոնք, «աւելի հեռատեսութեամբ» եւ առանց հրաւէրի, ուղղակի ծախեցին բնակարանին՝ համոզուած, որ պիտի երթան, եւ

միացան անճարցիները իրենց ահեղաթուռը թմբուկներով ու խլացուցիչ գուռնաներով,- եւ գոռշօրէն մօտեցաւ քարափին եւ անոր կապուեցաւ կամրջակով մը:

Երկու կամ երեք օր ետք ան արդէն լեցուած էր բեռներով ու խուռներամ հայրենադարձներով, երբ կամրջակը քաշեցին ու նաւը շարժեցաւ՝ մեկնողներու եւ մնացողներու ճիչերուն տակ, որոնք շուտով վերածուեցան սրտերէ բխած համբարի մը, որ առաջին անգամ կը լսէինք եւ հետագային աւելի յաճախ պիտի լսուէր.

«Այ կարաւան, ջան կարաւան, քշի՛ր քո ճամբան...»:

Այնուհետեւ կարաւան անունով բնորոշուեցան այն նաւերը, որոնք հայ հայրենադարձներով լեցուն կը մեկնէին Հայաստան: Ուրեմն առաջին կարաւանին յաջորդեցին երկու ուրիշներ մինչեւ աշուն, ապա կանգ առին՝ նոր թափով վերսկսելու համար 1947-ի ամառը, որ եւ անակնկալօրէն եղաւ վերջինը Լիբանանի պարագային: Ան փոքր չափերով շարունակուեցաւ 1948-ին Եւրոպայէն եւ Միացեալ Նահանգներէն ու այնպէս ալ վերջնականապէս դադրեցաւ հրամանով Ստալինի, որու քաղաքական նպատակներուն չէր ծառայեր ան այլեւս:

Ստալին ոչ միայն վերջ տուաւ արեւմտահայերու հայրենադարձին, այլեւ 1949-ին մօտ 6.500 արեւմտահայ ընտանիք նենգաբար աքսորեց Սիպերիա եւ Altai:

\*\*\*

Հայրենադարձը շատ բարդ եւ շատ ընդարձակ դիպաշար մըն է՝ պատմական շատ հակասական արժեւորումներով, որոնց մանրամասնութեան մէջ չեմ մտնել: Կը Պուրճ-Համմուտի վրայ:

Անցնող երկու տարիները պատճառ դարձան, որ անոր հայ բնակչութեան մօտաւորապէս մէկ երրորդը փոխարինուէր տեղացիներով, որոնք ընդհանրապէս կու գային հարաւի շիա համայնքէն: Իսկ 1948-ի արաբ-իսրայէլեան պատերազմին հետեւանքով Լիբանան խուժած հարիւր հազարաւոր պաղեստինցիներուն մէկ մասը իր կարգին հաստատուեցաւ Պուրճ-Համմուտի մէջ, բայց մանաւանդ անոնք հաստատուեցան ներկայիս ծանօթ «Նապաա» կոչուած բնակատեղին, որ իր խտութեամբ պահ մը գերազանցեց Պուրճ-Համմուտը, որուն ուղիղ շարունակութիւնն է ան: Մինչդեռ մինչեւ 1946 ան ամալի ճահիճ մըն էր, ուրկէ կը բխէին երեք ակեր. մերոնք «Իւչ կէօզ» (երեք ակ) կը կոչէին գայն: Նապաա եւս կը նշանակէ ակ:

Ազգագրական այս նոր տուեալները, գուճարուելով ժամանակին հետ ձեռք բերուած որոշ բարեկեցութեան մը, իրենց կարգին պատճառ դարձան, որ Պուրճ-Համմուտի հայութեան մէկ կարեւոր մասը լքէ գայն՝ դէպի այլ շրջաններ, չհաշուած հետագային ընդմիջտ գաղթողները: Այս բոլորը աւելի նսեմացուցին անոր հայցի դիմագիծը, եւ այդ նսեմացումը կը շարունակուի ցաւազին թափով մը:

(1) - Անշուշտ միակը չէր այս մէկը, կը գործէին ուրիշ գրասենեակներ եւս:

# Մակարավանք

«Վայ այն մարդուն, որ խալխի դատածիացն է ուտում»

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

## ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ


Ձկնորս Պէպօ, Քուռ գետի ջրեր իջել ձուկ որսում, ընտանիքին կերակրելու համար քաղաք տանէր վաճառելու: Աշխարհի հոգսերից, հասարակութեան այլասերումի պատճառած ցաւից տառապած Պէպօ, երգում էր իրենց ցեղի կրակաշունչ բանաստեղծ Չարենցի խօսքով ու իրենց ցեղից հրաշունչ երգահան՝ Արամ Խաչատուրեանի յօրինած երգը: Այն պատահական խօսք էր, Չարենց, խելագարուած ամբոխները տանում փրկելու աշխարհը, երկնից արեւներ վար բերում որ նոր լոյս հոսէր աշխարհին, իր նախնիների հոգուց պոռթկացած խօսքն էր ցեղի աշխատաւոր մարդկանց սրտերում գարկում, ժամանակի հետ գնում դարեր: Հայ մարդը ուր գնաց տուն պատեց, քրտնաջան աշխատանքով ընտանիքի հացը վաստակեց: Հայրենազրկուած հայ, գաղթական անհող հայ, մուրացկան չեղաւ, ձեռքը չերկարեց... արաբի ու այլոց համար աշխատեց, գերդաստանից ողջ մնացածների հացը վաստակեց, մերձաւոր արեւելքում հազարաւոր անտուն մուրացկանների մէջ ոչ մի հայ մուրացկան, պատիւ ունեւ հայու ոգուն: Հեռու երկիր նկարչական մրցումի գացած յետոյ Հայ փոքրեր իրենց գծած նկարների տարբեր յօրինուածքներում տուն էին գծել, իրենց ցեղի աշխարհում կարմիր քարից պատած տներ: Տուն վերադարձած Թամանեան կառավարական տան համար տուն էր պատում, անցորդներ ասում Թամանեանը եկեղեցի է պատում, քարն էր կարմիր, գիշերներին այն լոյս պիտի փռէր իրենց ոստանի հրապարակի չորս դին: Հայոց Տիգրան Մեծ Արքայ, իր նուաճած երկրներում պաշտպանական բերդեր կառուցեց, ճանապարհներ բացեց, ինքնավարութիւն շնորհեց, պետութեան կարիքները ապահովելու համար միայն հարկ վերցրեց, նրանց դատած հացը չկերաւ: Չթալանեց նրանց հացը, նրանց ինչքը: Անդրանիկ Փաշա, Անդրանիկ Մեծ մարդ է, իր երթի ընթացքին թշնամու գիւղերի մարդկանց հացը չկերաւ, ով այն ուժով էր վերցնում, հրամայում քնդակահարել: Թուրքը իր ճանապարհին, մինչեւ Կոնստանտնուպոլիսի դռներ ու նրանից էլ այն կողմը թալանեց ուրիշ արարուածը, ոստանի գրաւման ատեն հրամայել՝ այն երեք օրեր գինուորին, խալխի տառապանքով արարուած տների պատերն իրեն...: Է՛հ Եւրոպայի մարդիկ, չխանգարեցին նրանց երթը, հասան Աւստրիա, բնութեան տարերքի հետ նրա մարդիկ փրկեցին թուրքի բանակը, նրանց ետ վճարեցին: Ռուսներ կռուի ելան նրա դէմ, արեւմուտքը վախեցաւ Ռուսի յառաջխաղումից, չթողեցին ետ նուաճել Կոնստանտնուպոլիսը, իրենց նաւերի դէպի տաք ջրեր անցնող նեղուցները, անսպաստ պայմանագիր պարտադրեցին Ռուսին ու Հային, ետ գնացին իրենց երկիր: Թուականն էր 1453, այն համարեցին միջին դարերից անցում դէպի նոր դարերի սկիզբ: Նոր դարեր, այնտեղ կատարուեց մարդկային մեծագոյն, դեռեւս անպատիժ մնացած, ոճրագործութիւնը...:

Պէպօ, աշխատաւոր Պէպօ, ինչքան Պէպօների հոգիներ բզկտե-

ցին, ատենաներում իրաւունք որոնելու համար ընթացող Պէպօներ կալանատուն տարան, նրանց պատուհանների առաջ աշխատաւոր հայերի քաջ երգերի որոտներն էին երկինք պատում... հասնում էին «տիրոջը»...: Չէ՛... ասացէ՛ք, հարուստի փողը վաստակ...: Եօդունօլուզցի աշխատաւոր մուսա լեռցիի դազգահի առաջ կքած սանտրագործի աշխատանքը նրա աչքի լոյսն էր, գիւղի մեծահարուստը նրանց լոյսն էր գողանում, հարուստի անաշխատ եկամուտը գողութիւն է, տղան ինձ պատմում էր, որ իրենց վաճառած այդ սանտրերի դիմաց խոշոր տոպրակներով փող էին ստանում... հաւատում եմ, բնութեան մի անանցանելի, անբացատրելի ինչ որ կանոնական երեւոյթ պատժում է խալխի դատած հացը ուտողին... Մուսա Լեռան հարուստ մարդիկ իրենց գողացած քրտինքի դրամը շատ անգամներ կալուածի վերածել, աշխարհի մեծեր այն թուրքին տուել... աղքատացան: Հայոց փոքրացած երկիր, հայեր իրենց երկրի մի մասի վրայ յաղթողի իրաւունքով իրենց հին պետութիւնը վերականգնեցին, անզգամ ու մարդ կոչուելու անյարիր մարդ, ամիսներով աշխատաւորի վաստակը չհատուցանելը, իրենից հաց հայցող մանչուն հացն են գողացել, անաշխատ եկամուտը հարստութիւն չէ, գողութիւն է: Հիմա տեսնում էք ինչ է պատահում Հայոց աշխարհում, գողացածի յայտնաբերուած մասը վերադարձնում են, ու... կալանատուն: Հայոց աշխարհում քայ շինականի հոդին թափած քրտինքը դեռ թաց է... շինականների յետնորդներ կը գան իրենց երեսները շոյեն նրանով...:

Կիպրոս կղզի, երիտասարդ կեանքիս ծաղիկն էր բուսել տեղի Մելգոնեան կրթական Հաստատութիւնում, որտեղից ուսեալ մարդու վկայականը ձեռքից մտել կեանք, վայելում իննսուն ու աւելի ամեայ տառապանքով ու արեւի լոյսով ու լի սիրով քաղցրացած կեանքս: Արեւմուտքի այրեր, իրենց երկրների շահերի համար անխօս թուլատրել, որ 1974 թուականի Յուլիսի մի առաւօտ, Թուրքը մեծ բանակով ներխուժէր Կիպրոս կղզի, այն շատ մօտ էր Կիլիկիայի ափերին ու քաջերի երկիր իմ ծննդավայր Մուսա Լեռան: Հասել էին Կիպրոսի հանրապետութեան մայր ոստան, նրա կեդրոնական Լիտրա պողոտան դարձել թուրքի ու Կիպրոսի հանրապետութեան գրաւեալ մասի սահման: Թուրքի գաւթած տարածքում հիմնադրել՝ Կիպրոսի Թրքական Հանրապետութիւն, աշխարհ անցել յայտարարելով, որ Արցախի Հանրապետութիւնը օրինական չէ:

Կիպրոս կղզի, հազար-հազար դարեր առաջ այնտեղ թագաւորել էին ֆրանսական ծագումով Լուսինեան գերդաստանի իշխաններ, որոնց շառաւիղները մինչեւ հիմա էլ յարատեւում իրենց մայր երկրում: Լուսինեանների Լեւոն իշխանը, թագաւոր եղաւ Կիլիկիայի, նրա վերջին թագաւոր Լեւոն Զ.: Երկու տարի յետոյ Եգիպտոսի Մամլուքների հետ կռուի եղաւ, պարտուեց Լեւոնը, նրա կռուին ոչ ոք օգնեց: Յիշել էին նրան, Հայաստանի ու Ֆրանսիայի նախագահներ Լեւոն Տէր Պետրոսեան ու



Միտերան, 1996 թուականին, նրա մահուան 600 տարեկիցի առթիւ, այցելել Փարիզի մօտ գտնուող մատուռի տակ հանգչող նրա գերեզմանը:

«Ուտելու հաց չունեն, եկեղեցի են պատում, խելքին աչեցէք» գրել մեծ փրկուսի այ Աշուղ Զիւլաւնին: Կոնստանտնուպոլիսի Պատրիարքարանը հաւաստել էր, որ իրենց պահոցի տուեալներով Արեւմտեան Հայաստանում մօտաւորապէս երեք միլիոն հայեր էին բնակում, շէն ոստաններով, արտերով ու այգիներով, ցորեանի ծովակներով, երկու հազար հինգ հարիւր վանքերով ու եկեղեցիներով, երկու հազար ու աւելի սիրուն շէններով, բազում մանչերի դպրոցներ, քերթողներ, ինչ ասեմ, որ մէկը թուեմ: Տարին էր 1914, աշխարհում կռիւ էր, նրան մասնակցել էր իշխանութիւնը գաւթած «Երիտասարդ Թուրք»-երի կառավարութիւնը: Սպաննեցին հայերի միտքը, իր հողում ապրող Հայ սպաննելը յանցանք չհամարեցին, մի քանի ամիսների ընթացքում գէնք կրելու ընդունակ հազարաւոր տղամարդկանց բանակ զօրակոչեցին, գիտնուորին գէնք կրել չվատահեցին, դաժան աշխատացրին՝ ապա սպաննեցին: Անուժ տղամարդկանց ու կանանց իրենց գաւակների հետ պոկեցին հարնի շէներից, տարագրեցին, հրեշտակային մանչեր ջուր ու զեցին, ջուր խմեցին ճանապարհների փոսիկներից, եղնիկներ դարձած սլացան հայոց լեռներ, մահուան կարաւաններով քչեր հասան արաբական անապատներ: Տարագրութիւն, ամենասարսափագրու միջոցներով մահերգութիւն, եղերեղութիւն եղաւ, սակայն ով չէր ուզում մեռնել չմեռաւ: Հայը չուզեց մեռնել, վերջին կռիւ, չէթշնամու դէմ կռուի ելան Սարգսրապատի դաշտում, Բաշ Ապարանում, Ղարաքիլիսում: Հայը կռոււմ սպաննեց իրեն սպաննելու եկած թշնամուն, ուզածի դաշտից փախաւ թուրքը, ետին թողնելով երեք հազարից աւելի զարնուած գիտնուոր, սպաննեց հեռու Դարդանելի ափերին դաշնակիցների բանակներին պարտութեան մատնած Վէհիպ փաշայի զօրախումբը: Հայը, իր պատմութեան շառաւիղների ընթացքում մղած բազում ճակատամարտերում՝ հայրենի հողի, ցեղի մարդկանց ու իրենց կանանց պատուի համար կռուել, յաղթել թշնամուն: Հաւատաց Պարսիկի, Հոռովմէջցու, Բիւզանդացի Յոյնի, թուրքի ստապատիր խօսքին... խաբուեց, տանուլ տուեց կռիւը:


Պատմութիւն եղան հազար տարիները, Թուրքը յայտարարել

էր, փլոււմ է մի շքեղ տաճար, հայեր գային այն նորոգէին, չգնացին, նրանց ասացին, որ որպէս նուաճողներ իրենք նորոգէին այն, ինչպէս որ նորոգել էին Վանայ ծովի Սուրբ Խաչ տաճարը, արտօնել տարին մէկ անգամ պատարագ անել, պատարագել էին վանի ապստամբութեան կռուում ընկած քաջերի հոգիների հանգստութեան, շրջանում սպաննուած հայերի հոգիների անմեղութեան լոյսը: Վանայ քաղաքի քաղաքապետը արգիւն էր շրջանի գօրախումբի սպային թնդանութի հարուածներով զարնել տաճարը, փլել այն, մարել մարդկային քաղաքակրթութեան լոյսի մի անմար ջահ: Հայեր, գնացէ՛ք փրկուց փրկէ՛ք եղեղեցին, եկեղեցիները, դպրոցները, Կարինէրգորումի Սանասարեան ուսման տաճարը որ ապագայի ոտք դնելու տեղ պատրաստէք ձեզ համար: Արեւմտեան Հայաստանում փլած տներ, փլած վանքեր պահում են յուշը անցեալի, յուշ թողեցինք մեր տները ու աղօթատեղիները, արտերն ու այգիները, դպրոցները, նրանց յուշը այրում են մեր հոգիները, կանչում հասնել իրենց, նորոգել իրենց, հայեր գան եկեղեցիներում նորէն մկրտութիւն անեն, հայեր գան հայրենի հողի վրայ նորէն աղօթեն, դպրոցներում մանչերի ծիծաղ, այգիներում ծաղիկ, արտերում ցորեանի ծովեր, սրբացած նահատակների հոգիներին լոյս վառուեն:

Թուրքը, Արեւմուտքի քաջալերութեամբ, Կիպրոսի Հանրապետութեան հետ կռոււմ գաւթել կղզու մէկ երրորդը, այնտեղ գտնուում հայկական Մակարայ վանքը: Զաւթել էին Մակարայ վանքը, ինչպէս ամէնուրեք, նաեւ աւերել այն, թալանել նրա պահուստներում պահպանուած հազուագիւտ ձեռագրեր ու կրօնական մասունքներ: Կիսաքանդ վիճակում է այն, ամալի է վանքը, խուցերը առանց տանիքի, պատերը կիսափուլ, նրանց վրայ կոտորուած խաչերով քարեր, կողոպտուած պատահականներից ու դռներից սուլում է քամին, աշխարհին կանչում՝ թուրքն է այդտեղից անցել:

Կիպրոսի հայկական համայնքի ներկայացուցիչ Վարդգէս Մահատեսեան, Կիպրոսի հայկական առաջնորդարանի ներկայացուցիչների հետ, 2014 թուականի Մայիս ամսին ուխտագնացութիւն կատարել դէպի Մակարայ վանք, առաջին այցելութիւնը պատահած եղել 2007 թուականի Մայիս ամսին, կղզու մի մասի գրաւումից

# Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութիւն. 49 Սփիւռքահայ Ուսուցիչներ Արժանացան Հայերէնով Դասաւանդողներու Առցանց Ուսուցումի Մրցանակին



Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժանմունքը Սփիւռքի ուսուցիչներուն ուղղուած մրցանակ մը յայտարարեց Ապրիլ 2020-ին:

«Հայերէնով դասաւանդողներու առցանց ուսուցումի մրցանակ»ին նպատակն էր քաջալերել Պսակաձեւ Ժահրին պարտադրած ինքնամեկուսացումին պատճառաւ առցանց հարթակներ տեղափոխուած կրթական ընթացքին մէջ հայերէնով իրենց ներդրումը ունեցող ուսուցիչներուն անհատական աշխատանքները:

Ուսուցիչները պէտք է դիմէին ներկայացնելով իրենց պատրաստած նիւթերը, իրենց աշակերտներուն հետ ունեցած հաղորդակցութեան օրինակները, եւ իրենց օգտագործած առցանց հարթակին վրայ իրականացուած ուսուցողական տուեալ աշխատանքին ընթացքն ու նպատակակէտերը բացատրող գրութիւն մը:

Մրցանակը դիմումներ ընդունեց վեց շաբթուան ընթացքին: Դիմումներուն արժեւորումի աշխատանքները կատարուեցան երկշաբթեայ դրութեամբ, եօթը հոգիէ բաղկացած յանձնախումբի մը կողմէ, եւ նկատի ունենալով հետեւեալ չափանիշերը:-

o Առցանց համակարգերու գործածութեան մէջ առաջարկուած նորարար մօտեցումները:

o Մանկավարժական մեթոդաբանութեան կիրարկելիութիւնը եւ ձկունութիւնը:

o Աշակերտներուն մասնակցութիւնը եւ անոնց համար «հաճելի»-ի ազդակը:

o Գործադրութեան եւ հայերէնի գործածութեան որակը:

o Ուրիշներուն կողմէ ծրագրին գործածելիութեան հեռանկարը:

Այս վեց շաբթուան ընթացքին, Հիմնարկութիւնը 13 երկիրներէ 106 դիմումներ ստացաւ: ամենօրեայ եւ շաբթօրեայ հայկական դպրոցներու մէջ աշխատող ուսուցիչներէ: Դիմողներուն մեծամասնութիւնը հայոց լեզուի դասատուներ էին, բայց մրցանակը սահմանափակուած չէր իրենցմով: Պատմութեան, կրօնի, թուաբանութեան, գիտութեան, արուեստի եւ նոյնիսկ մարզանքի ուսուցիչներ դիմեցին իրենց տարբեր բնոյթի աշխատանքներով անոնցմէ իւրաքանչիւրը բացառուելով իր եւ իր աշակերտներուն ունեցած փորձառութիւնը հեռավար ուսումնառութեան աշխարհին մէջ: Դիմողներուն միջին տարիքը 44-ն էր:

Հիմնուելով դիմողներու մեծ թիւին վրայ եւ հնարաւորին չափ շատ ուսուցիչներ քաջալերելու նպատակով, նախապէս յայտարարուած 30 մրցանակին փոխարէն Հիմնարկութիւնը տրամադրեց 500 ԱՄՆ տոլար արժողութեամբ 49 նպաստ, քաջալերելով դիմողներուն 46 տոկոսը:

«Մեր սրտագին շնորհաւորանքները կը փոխանցենք բոլոր մրցանակակիրներուն: Դժբախտաբար, չէինք կրնար մրցանակ տրամադրել բոլոր մասնակիցներուն: Այնուամենայնիւ կը գնահատենք բոլորին ջանքերը եւ ընդհանրապէս հայերէնի դասաւանդումին դիմագրուած մարտահրաւէրներուն դիմաց անոնց կատարած մեծ աշխատանքը: մանաւանդ համաճարակի այս օրերուն», նշեց Հայկական Համայնքներու Բաժանմունքի տնօրէն Դոկտ. Ռազմիկ Փանոսեանը:

Յաւելեալ տեղեկութիւններու եւ «Հայերէնով դասաւանդողներու առցանց ուսուցումի մրցանակ»-ին մրցանակակիրներուն անուանացանկին ծանօթանալու համար այցելել [gulbenkian.pt/armenian-communities/](http://gulbenkian.pt/armenian-communities/)

# Ֆրանսահայ Անուշ Թորանեանը Փարիզի փոխ քաղաքապետ



Անուշ Թորանեան, 3 Յլունիսիսին, ընտրուած է Փարիզի քաղաքապետի օգնական-տեղակալ՝ հանրային կեանքին քաղաքացիներու մասնակցութեան եւ հանրային բանավէճերու հարցերով: Այս մասին յայտնէ Nouvelles D'Armenie-ն:

Ան ծագումով առաջին հայն է, որ նման բարձր պատասխանատուութիւն ենթադրող պաշտօն կը ստանձնէ Ֆրանսայի մայրաքաղաքին մէջ:

Նշենք, որ ան Փարիզի քաղաքապետի վերջին ընտրութիւններուն կը գլխավորէր Փարիզի գործող քաղաքապետ Անն Իտալիոյի ցուցակը՝ 15-րդ վարչական


շրջանին:

Ըստ մամուլով տարածուած լուրերուն, մեծ պայքար ծաւալած էր Ընկերակարական կուսակցութեան թեկնածու Անուշ Թորանեանի եւ Եւրոպական խորհրդարանի անդամ Ակինես Էվրենի միջեւ, որ արմատներով թուրք է:

Անուշ Թորանեանը ծնած է 1991-ին: Ան Հայ բարեգործական ընդհանուր միութեան Ֆրանսայի գրասենեակի տնօրէն է, տարիներ շարունակ պայքարած է հայ մշակութային ժառանգութեան պահպանման եւ Հայաստանի, Արցախի գարգացման համար:

# «Քովիտ 19»էն Մահացած է Հայրենի Գիտնական Ֆելիքս Հայրապետեանը

Ֆրանսահայ - Հայաստան Առեւտրա-արդիւնաբերական պալատը (ՖՀԱԱՊ) խոր վշտով տեղեկացուցած է կառույցի գործադիր տնօրէն Տիկին Արուսեակ Լիւտի-Հայրապետեանի հօր անսպասելի մահուան մասին:



4 Յուլիսին, Երեւանի Ժամանակով Ժամը 10-ին, «Էրեբունի» բժշկական կեդրոն մահացաւ ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի (ԳԱԱ) անդամ, գիտնական, երեւութաբանութեան եւ կենսաբանութեան բառարաններու եւ հետազոտութիւններու հեղինակ, Երեւանի պետական համալսարանի նախկին դասախօս, գիտութիւններու թեկնածու, դոկտոր-փրոֆէսօր՝ Ֆելիքս Փառնակի Հայրապետեան: Անոր սիրտը դադարեցաւ բաբախելէ կրկնակի թոքաբորբի հետեւանքով, որ հաւանաբար COVID 19-ի արդիւնք էր:

Ժողովրդավարական եւ առաջադէմ արժէքներու իրականացման գործին մէջ կարեւոր էր: Ան գիտ կերտած է որպէս մարդ, քաղաքացի: Ես իրեն անսահման շնորհակալ եմ երջանիկ ու պաշտպանուած մանկութեան ու պատանեկութեան տարիներու, որակեալ կրթութեան, հրաշալի ընթերցումներու ու կեանքի դասերու համար, մեծ բանավէճերուն, անմոռանալի ծիծաղին, ինչպէս նաեւ երջանկութեան ու ներդաշնակութեան մթնոլորտին համար, որ միշտ կը տիրէր մեր տան մէջ իր սիրոյ, նուիրուածութեան, մեծա-հոգութեան ու բացառիկ իմաստութեան շնորհիւ: Ան յաւերժ կը լուսաւորէ մեր սիրտերը», -նշած է Արուսեակ Լիւտի-Հայրապետեան:

ՄԻՆԿ-ի Խորհրդատուական Գրասենեակ

COVID-19 HOTLINE

(888) 908-1887  
contactus@aebu.org

# Մակարավանք

Շարունակուած էջ 17-էն

երեսուն երեք տարիներ յետոյ: Մակարայ վանքը հիմնադրուել էր Եգիպտոսի Ղպտի քրիստոնեայ համայնքի կողմից մեր թուարկութեան շուրջ 1000 թուականին: 1425 թուականին նուիրաբերուել էր հայ եկեղեցուն: Այն ձօնուած եղել Աղեքսանդրիայի Սուրբ Մակարիոս մենակեաց-ձգնաւորին: Վանքը գտնուում է թրքական գրաւեալ Փենտաղաքի շրջանի արեւելեան մասի 530 մեթր բարձրութեան վրայ, Հալեվկա նահանգի Պլատանիոտիսսա անտառի լանջում, նրա Հալեվկա բնակատեղիին մօտիկ: Վանքի ընդարձակ հողամասը զբաղեցնում է 8500 Դոնիմ տարածութիւն, որտեղ աճում են 30000 հազար ձիթենիի ու կարնուբի ծառեր: Հողատարածքը երակարուում է մինչեւ ծովեզերք, բնութագրուում որպէս զեղատեսիլ ու հովուերգական վայր: Մակարայ վանքին կից բլուրից կարելի է տեսնել Կիլիկիայի Տաւրոսեան լեռնաշղթան: Թուրք մի գործարար ցանկացել աւերուած վանքը վերածել զբոսաշրջիկութեան կեդրոնատեղիի հիւրանոցային համալիր: Հայեր ազդու բողոքել, միջազգային մշակոյթային կազմակերպութիւնը (UNESCO) արգելել այն, Մակարայ վանքը համարել մշակոյթի միջազգային նշանակութեան արժէք ունեցող համալիր:

Հայկական վանքը դարերով եղել հայերի ու օտարների ժողովրդային ուխտատեղի, Կիլիկիայի ու Երուսաղեմի Հայ կղերականների հանգստեան վայր, տեղական ու օտար ճանապարհորդների եւ Սուրբ Երկիր այցելելու մեկնող ուխտաւորների ժամանակաւոր կեդրոնատեղի: Վանքը հանդիսացել է Հայ սկաւտների ու աշակերտների ամառային բանակումի վայր, նաեւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան աշակերտների ամառային արձակուրդների ապաստան: Վանքը եղել մշակոյթի կեդրոն: 1202-1740 թուականներին, վանքի վարդապետները իրենց խուցերում յօրինած անգին ձեռագրեր եւ նաեւ այլ բազմաթիւ կրօնական մատուցներ պահուում էին նրա ձեռագրատանը: Բարեբախտաբար 1947 թուականին ոմանք փրկուել էին, փոխադրուելով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի 'Կիլիկիա' թանգարան:

Տարիներ յետոյ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս՝ Արամ Ա. Կաթողիկոսական փոխանորդ Խորէն Արք. Տողրամաձեանի եւ Կիպրոսի համայնքի պետական ներկայացուցիչ՝ Վարդգէս Մահտեսեանի հետ այցելել Նիկոսիոյ թրքական գրաւեալ բաժնի մէջ գտնուող Ս. Աստուածածին եկեղեցի, նոյն շրջափակին մէջ գտնուող Ազգային առաջնորդարան եւ Մելիքեան-Ուզունեան դպրոց: Թուրքն էր այնտեղից անցել, նրա ներկայութեան ազդեցութիւնն էր այնտեղ, թէեւ անոնք փրած չէին, սակայն տարբեր աստիճանի վնասուած: Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը, այցելել նաեւ Մակարայ վանք:

Արամ կաթողիկոս կանգնել էր խախուլ դարպասի կամարի առաջ, չկային նրանց փեղկերը, տարել էին...: Տխուր, մեղամաղձոտ հայեացքով նայել փրած վանքին, առանց առաստաղի խուցերին, կիսափուլ մատուռին: Իջել բակ, մտել մատուռ, միայն բնութեան տարերքը

չէր աւերել այն, մարդու աւերման ու թալանման հետքեր կային: Ինչպէս էր, որ մատուռի պատերը քանդած մարդկանց գլխին քար չէր ընկել, ասում էին Երեւանի Ամիրեան փողոցի եկեղեցին քանդելու ատեն մարդ էլ գլորուել պատից ներքեւ, երեւի յիշել այնտեղ հնչած վարդապետների շարականների անուշ երգերը, մտացրիւ եղել: Հայերի պատարագի ծէսը նման չէ ուրիշ քրիստոնէական համայնքների պատարագի ծէսերին, հայոց եկեղեցին ազգային եղաւ, ցեղի ոգու մի մասնիկ եղաւ, բնութեան արարչութեան ոգու գէնքից աւելի հատու եղաւ: Սովետի իշխանութեան ատէն մի քահանայ հարցրել գիտնական գարմիկին, մարդկանց հոգիներից պոկեցիք հաւատք, այնտեղ ի՞նչ դրիք...: Նախկին իրաւակարգի հասարակութեան մարդկանց հոգիներին անաձնական սիրոյ ոգու զգացում լեցուէր, սիրել իր նմանին, սիրել բանաստեղծութիւն, սիրել անուշ նախնիներին, սիրել բնութիւն, խօսքի ատէն չմարել կեանքի լոյս, ամէն մարդ իր ըմբռնումի մտածումին մնար: Հաւատում եմ, որ Կաթողիկոսին ընկերակցող հոգեւորական ու այլ մարդիկ այնտեղ «Տէր Ողորմի» շարականը երգել, ի՞նչու Տէրը ողորմէր, իրենց ցեղի ուժը ողորմէր երկրին ու նրա մարդկանց: Շատ տարիներ առաջ վանքում ամառային հագասի ատէն, Մելգոնեանցի սան-սանուհիներ կանգուն շքեղ մատուռում «Առաւօտ Լուսոյ» երգել, արեւին ու լոյսին նուիրուած շարական, նրա հնչիւնները որպէս լոյսի շողեր գնացել շոյել անտառի ծառերի երեսները: Կաթողիկոսը, խռովալոյզ դէմքով շրջել կիսափուլ վանքի ձեռագրատուն, վանական բաժանմունքներ, ծանօթացել վարդապետների, ուխտաւորների հանգստեան փրած խուցերին: Վարդապետների խուցեր, այնտեղ տաղեր, բանաստեղծութիւն յօրինել, ցեղի հին մատեաններ ընդօրինակել, ցեղի մշակոյթ հետազօտել: Մելգոնեանի սան-սանուհիներ այնտեղ իրենց ամառային հանգիստն էին վայելում, աղջիկները խուցերի բաց պատուհանների առաջ

կանգնած անուշ տաղեր երգել, վանքի բացատում կանգնած տղաներ, իրենց երեւակայութեան թեւերին յենած ունկնդրել նրանց, պատուհաններից պայթած անուշ ժպիտը քաղցրիկ շունչ պարզեւել իրենց: Ես էլ էի լինում վանքի բացատում «նրա» երգը ունկնդրել: Մելգոնեանում դասաւանդող Պարոյր Վարդապետի «Ջէյրան» անունով ձին էի խնամում, մեղեդիների հնչիւնները բացել էին հոգուս թեւերը, յաճախ ցատկել նրա մերկ քամակին, սանձը պինդ բռնած, սլացիկ երթով արշաւել դէպի բարձր բլուր, ձիու վազքը գեղեցիկ է, մի պահ «Ջէյրալ»-ը խրխնջացել էր, կանչել էի «Ջէյրան»-ս տար ինձ մեր երկիր, նրա լեռան լանջերից մանուշակի ու նարկիզի փունջեր կազմած ետ վանք բեր, պատուհանին կանգնած աղջկան քաջերի լեռան բոցրով փունջեր նետել, ասացել, որ այն իմ երկրից եմ քաղել, քեզ մեր երկիր կը տանեմ, ժպտացել էր աղջիկը: Սակայն ո՞վ էր պահպանում ու խնամում Մակարայ վանքը՝ Յակոբ Գիւլգելեանը (Ակուն Աղա) Մարթա կնոջ ու վեց զաւակների հետ: 1927 թուականին, Յակոբ Գիւլգելեանը, Տէօրթ Եօլում մղուած մարտերից յետոյ ընտանիքով Կիպրոս փոխադրուել: 1927, թէ 1930 թուականներից մինչեւ 1960 թուականը Մակարայ վանքի խնամողն ու պահպանողն եղել: Այս գրութիւնով յիշատակում եմ Ակուն աղային-Յակոբ Գիւլգելեանին- որը իր կնոջ ու վեց զաւակների՝ Գէորգի, Աբրահամի, Մարիի, Հելենի, Մակարի եւ Լիլի-ի հետ հետ 30 ու աւելի երկար տարիներ խնամել, պահպա-

նել էին Մակարայ վանքը, ինչքան յիշում եմ նրանցից Մակար ու Աբրահամ ուսանում Մելգոնեանում: Նրանցից ամենայ տարեցը Գէորգն էր, վեց տարեկան եղել ընտանիքով Կիպրոս փոխադրուելու ատէն: Մակարավանքի շրջանում կալուածատէր եղել Հաճի Թումա անունով մի Յոյն: Նա յաճախ էր Մակարայ վանք գալիս: Պատմում էին, որ շրջանի գիւղացիները դժգոհ եղել նրա վարմունքից: Մարտական հրացանի ձայն էր, քիչ անց Գէորգն էր մոռացուած վանք գալիս: Ասում էին նա էր զարկել Հաճի Թումային, էշին հեծած Ատալիա հանդամաս գնալու ատէն, փամփուշտը խոցել էր Թումային ու իշոււն, տեղում մահացել: Ոստիկաններ եկել, պատահարին մօտիկ թփի տակ գտել մարտական գէնք ու նրա կողքին թրծաշաղաղի տուրակից փրցուած մի կտոր թղթի մէջ փաթաթուած փամփուշտներ: Թուղթի կտրուածքը համապատասխանել էր իրենց տան թրծաշաղաղի տուրակի կտրուածքին, այս ու ուրիշ հանգամանքներ հաստատել էին, որ Գէորգն էր զարկել Թումային, բանտարկել էին: Դատաւարութիւն եղել, անպարտ հռչակել Գէորգին, երեւի շրջակայ գիւղերի օժանդակութեամբ: 1877- 1878 թուականներին պատերազմ էր Ռուսաստանի ու Թուրքիայի միջեւ: Պատերազմում իրենց օգնելու համար Թուրքիան Կիպրոս կղզին յանձնել Անգլիային: Մակարայ վանքի հողի տարածքի սեփականութեան իրաւունքի վաւերացումը (Տաբու) իսկական օրինակը գտնուում է Մեծի Տանն Կիլիկիոյ Կիպրոսի թեմի առաջնորդարանի պահպանում:



NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC  
MEMBER

**Garine Depoyan**

626-755-4773  
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106  
ghdepoyan@gmail.com

**Pasadena Unified School District Armenian Dual Language Immersion High School Program. (DLIP)**

**The program will be located at Blair School, home to PUSD's International Baccalaureate programs.**

**Register Now!**

2020-2021 Registration for the Armenian Dual Language Immersion High School Program at Blair is now open!

**Armenian Dual Language Immersion Program**

**626-396-3606**  
openenrollment.info

PASADENA UNIFIED SCHOOL DISTRICT  
Our Children. Learning Today. Leading Tomorrow.

### Մխիթարեանի Կոլը Չօգնեց «Ռոմային» Նեպոլի Մէջ Պարտութիւն Կրելէ

Իտալիայի առաջնութեան 30-րդ խաղաշրջանին «Ռոման» հիւրընկալուեցաւ «Նապոլին» եւ պարտութիւն կրեց 1:2 հաշիւով:

Դաշտի տէրերը առաջինը հասան յաջողութեան: 55-րդ վայրկեանին սպանացի յարձակող Խոսէ Կալչեխոնը գրաւեց սպանացի Պաու Լոպեսի պաշտպանած դարպասը:

Սակայն 5 վայրկեան անց Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը պոստիցի յարձակող էդին Զեկոյի փոխանցումէն յետոյ գեղեցիկ անցում կատարեց եւ հեռուէն գրաւեց «Նապոլի» դարպասը: Մխիթարեանը մեկնարկային կազմին մէջ անցկացրեց ամբողջ հանդիպումը:



82-րդ վայրկեանին «Նապոլի» յաղթական կոլը խփեց իտալացի յարձակող Լորենցո Ինսինչեն:

«Նապոլին» 48 միաւորով հաւասարեցաւ 5-րդ տեղին մէջ ընթացող «Ռոմային» եւ ետ է կոլերի տարբերութեամբ:

Փորթուգալացի Պաուլու Ֆոնսեկայի գլխաւորած խումբը կրեց երրորդ անընդմէջ պարտութիւնը:

### «Ջենիթը»՝ Ռուսաստանի 6-ակի Ախոյեան



Սանկտ Պետերբուրգի «Ջենիթը» ռուսական Պրեմյեր Լիգայի 26-րդ խաղաշարքին «Կրասնոդարին» 4:2 հաշիւով յաղթելու շնորհիւ պաշտպանեց Ռուսաստանի ախոյեանի տիտղոսը:

«Ջենիթը» վաստակած է 62 միաւոր: Երկրորդ տեղը ընթացող «Լոկոմոտիւրը» ունի 49 միաւոր: Առաջնութեան աւարտին մնացած է չորս խաղաշարք:

Պետերբուրգեան ակումբը 6-րդ անգամ եւ երկրորդ տարին անընդմէջ կը հանդիսանայ լաւագոյնը:

«Ջենիթը» Ախոյեանական տիտղոսներու քանակով հաւասարեցաւ Մոսկուայի ԲԿՄԱ-ին: Ռեկորդակիրը «Սպարտակն» է՝ 10 տիտղոս: «Ջենիթը» 1984-ին դարձել է նաեւ ԽՍՀՄ ախոյեան:

### «Ռեալը» Երկրորդ խաղին Անընդմէջ Յաղթեց Ռամոսի Կոլի Շնորհիւ

Սպանիայի առաջնութեան 34-րդ խաղաշարքին Մատրիտի «Ռեալը» Բիլբաոյի մէջ մրցեցաւ «Աթլետիկի» հետ: Ֆրանսացի Զինետին Զիտանի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ նուազագոյն հաշիւով:

73-րդ վայրկեանին պրագիլացի պաշտպան Մարսելոյի վաստակած 11 մեթրանոցն արդիւնաւէտ եղաւ Արքայական խումբի աւագ, սպանացի պաշտպան Սերխիո Ռամոսը, որու կոլի շնորհիւ «Ռեալը» նուազագոյն հաշիւով յաղթած էր նաեւ անցած խաղաշարքի «Խետաֆէին»:

«Ռեալը» 77 միաւորով կը գլխաւէ մրցաշարային աղիւսակը եւ մէկ հանդիպում քիչ անցկացրած «Բարսելոնայի» նկատմամբ ունի 7 միաւորի առաւելութիւն: Կատալոնական խումբը Յուլիսի 5-ին կը հիւրընկալուի «Վիլյաուեալին»: «Աթլետիկը» 48 միաւորով 8-րդ տեղը գրաւելով:

Առաջնութեան աւարտին մնացած է չորս խաղաշարք:

### «Տոտենհեմը» Աւելի Ուժեղ էր «Էվերտոն»-էն

Անգլիայի Պրեմյեր Լիգայի 33-րդ խաղաշարքի Լոնտոնի «Տոտենհեմը» իր դաշտին մէջ ընդունած էր «Էվերտոնին»: Փորթուգալացի Ժոզէ Մոուրինիոյի խումբը յաղթեց 1:0 հաշիւով:

Հանդիպման միակ կոլը 24-րդ վայրկեանին տեղի ունեցաւ: «Էվերտոնի» անգլիացի պաշտպան Մայքլ Բինը դարձաւ ինքնակոլի հեղինակ:

Այժմ «Տոտենհեմն» ունի 48 միաւոր եւ մրցաշարային աղիւսակի 8-րդ տեղը կը գրաւէ, իսկ «Էվերտոնը» 11-րդն է՝ 44 միաւորով:

### «Բաւարիան» 20-րդ Անգամ Ըլլալով Նուաճեց Գերմանիայի Գաւաթը

Միւնխի «Բաւարիան» 20-րդ անգամ նուաճեց Գերմանիայի գաւաթը: Պեուլինի «Օլիմպիական» ստադիոնի մէջ տեղի ունեցած եզրափակիչ ընթացքին Հանս-Դիտեր Ֆլիկի գլխաւորած խումբը մրցեցաւ Լեւերկուզենի «Բայերի» հետ եւ առաւելութեան հասաւ 4:2 հաշիւով:



«Բաւարիայի» կազմին մէջ աչքի ընկան աւստրիացի պաշտպան Դաւիթ Ալբաբան, գերմանացի կիսապաշտպան Սերժ Գնաբրին եւ լեհ յարձակող Ռոբերտ Լեւանդովսկին, որը դարձաւ դուբլի հեղինակ:

Յիշեցնենք, որ «Բաւարիան» այս մրցաշրջանի ընթացքին 30-րդ անգամ ըլլալով նուաճած էր ախոյեանի կոչումը:

### «Ռեալը» Ստիպուած Կ'ըլլայ 25 Միլիոն Եւրոյով Վաճառել Խամես Ռոդրիգեսին

Մատրիտի «Ռեալի» գոլումպիացի կիսապաշտպան Խամես Ռոդրիգեսը անգլիական Պրեմյեր Լիգին մէջ պիտի շարունակէ իր խաղալ: Արքայական ակումբը ստիպուած պիտի ըլլայ 25 միլիոն եւրոյով վաճառել 28-ամեայ ֆուտպոլիստին, որպէսզի յաջորդ տարի ան անվճար չհեռանայ:



Խամեսին գնելու ցանկութիւն ունեն «Մանչեսթեր Յունայթեդը», «Արսենալը», «Էվերտոնն» ու «Վուլվերհեմփթոնը», որոնք 25 միլիոն եւրոյէն աւելի չեն առաջարկէր, կը հաղորդէ Marca-ն:

Անցեալ տարի «Աթլետիկոն» ու «Նապոլին» Խամես Ռոդրիգեսի համար կ'առաջարկէին 45-50 միլիոն եւրո, սակայն «Ռեալը» մերժեց: Խամես Ռոդրիգեսը մատրիտեան ակումբէն կը ստանայ տարեկան 7 միլիոն եւրո աշխատավարձ:


## VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles



- Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝
- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ աւրնչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը փափաքիք գանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնելով՝ ՎԱՀԻ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ:



Նոր Գիրքերու  
Տպագրութեան  
եւ Հին Գիրքերու  
Նորոգութեան

**Vahe Atchabahian**  
2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104  
**Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924**  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com